

Անժել Բյուրքյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան

# ՄԱՅՐԵՆԻ

Վաճառքի ենթակա չէ:

# 2

**Մաս 2**



Անժել Քյուրբջյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան

# ՄԱՅՐԵՆԻ

(2-րդ լրանշակված հրատարակություն)



Նկարիչ՝ Մուսաննա Այվազյան



Երևան 2019

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075)  
ԳՄԴ 81.2 Հ g72  
Ք 709

**Հաստատված է  
ՀՀ կրթության և գիտության  
նախարարության կողմից**

Քյուրքչյան Ա.Ն., Տեր-Գրիգորյան Լ.Ա.

**Ք 709** Մայրենի 2: Մաս 2/ Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք/  
նկ.՝ Ա. Այվազյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2010, 88 էջ:

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075)

ԳՄԴ 81.2 Հ g72

ISBN 978-9939-52-220-3

© Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան  
© «Էդիթ Պրինտ»

# ՁՅՈՒՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՑ



Ո՛վ է եկել փանիքներին  
Սավան փռել այս գիշեր,  
Սառցե մափով պափուհանին  
Նախշեր քաշել այս գիշեր...

**Մանուկն ու ձյունը**

– ճերմակ փաթիլ,  
Սիրուն թիթեռ,  
Քեզ ո՞վ բերեց  
երկիրը մեր:

Իջի՛ր անթիվ  
Քույրերիդ հետ,  
Գարունը գա՛  
Կղառնաք հետ:

– Արցունք են են  
Անպից պոկված,  
Ցրտից սառել,  
Ընկել են ցած:

Իսկ հիմա բաց  
Երկնքի տակ  
Դաշտում հյուսե՛ք  
ճերմակ վերմակ:

Այն մոխրագույն  
Անպիկը, տե՛ս,  
Իմ սիրասուն  
Մայրն է, գիտե՞ս:

Ու տաքացրե՛ք  
Ցորեն-գարին՝  
Բերքով առատ  
Լինի տարին:

– ճերմակ փաթիլ,  
Սիրուն թիթեռ,  
Իջի՛ր, իջի՛ր  
երկիրը մեր:



**Հարցեր և առաջադրանքներ**

ձյուն  
ձյունաճաճկ



1. Ձյունը ինչո՞ւ է անպիկին իր մայրը համարում:
  2. Փորձի՛ր բացատրել վերջին երկու քառասյուղերի միտքը:
  3. Այս անուշիկ բանասարեղծությունը կարդացե՛ք դերերով:
- Կարդացե՛ք «Փայտիկի պատմությունը» բանասարեղծությունը:



## Հանկուխներ

Թիթեռների պես  
Իջավ նա հողին,  
Բայց վահուով նայեց  
Արևի շողին:



Շոգից թև առավ,  
Երկինք բարձրացավ,  
Դարձավ ձյուն, անձրև  
Ու վերադարձավ:



## Սուրասերտ

Փաթիլները իջան ներքև մալանջ-մալանջ,<sup>1</sup>  
Իսկույն առա, փարա դրի փարփա առաջ:  
Տարս մանեց<sup>2</sup>, գուլպա գործեց,  
Գործեց ձեռնոց, գործեց վզնոց,  
Այդ բոլորը փաթուկ-փաթուկ  
Նագրեց ինձ, ճամփեց դպրոց:

<sup>1</sup>մալանջ-մալանջ - փունջ-փունջ (բրդի նման)

<sup>2</sup>մանել - բրդից թել պատրաստել



Կազմիր բառերի ճիշտ կապակցություններ.



## Ասայվածք

Չմռան ձյունը  
Ամռան հացն է:

ձյուն

ժերմակ  
սիրուն  
մոխրագույն  
տաք  
առատ

ամպ  
փաթիլ  
թիթեռ  
բերք  
վերմակ

Չետկյալ վանկատված բառերը գրի՛ր ամբողջական ձևով.

թի-թեռ, ար-ցունք, մոխ-րա-գույն, ձը-մեռ, ձը-նա-գըն-դի,  
ձը-նե-մարդ, մա-նուկ, ե-րա-ժըշ-տու-թյուն, ցըր-տա-հար, նը-  
կա-րիչ, տա-քա-նալ:

Օրինակ՝ մա-նուկ – մանուկ,  
ե-րա-ժըշ-տու-թյուն – երաժշտություն:



## Բենբին

(հեթիսթ)

### 1

Բենբին նոր էր ծնվել, և անտառի բնակիչները՝ սկյուռիկները, նապաստակները, թռչունները՝ բոլորը եկել էին շնորհավորելու մայր եղնիկին ու տեսնելու իրենց նոր ընկերոջը:

Անցնում էին օրերը, Բենբին մեծանում էր և ամեն օր մի նոր բան էր սովորում: Իսկ ընկերները, հատկապես նապաստակները, որոնց հետ Բենբին շատ էր մտերմացել, նրան ծանոթացնում էին անտառի բոլոր գեղեցիկ անկյուններին:

Գարնանը հաջորդեց ամառը, հետո՝ աշունը: Մի օր էլ Բենբին արթնացավ ու չճանաչեց իր անտառը. շուրջը ամեն ինչ փոխվել էր, ամեն ինչ դարձել էր ճերմակ:

– Պարզապես ծյուն է եկել, Բենբի, – ժպտալով ասաց մայրիկը, – մո՛տ արի:

Բենբին մի քանի քայլ արեց: Նրա կճղակներն իսկույն խըրվեցին սպիտակ, փափուկ ձյան մեջ. շատ սառը, բայց հաճելիորեն թարմացնող ձյունը զվարճացրեց Բենբին:

Որքա՛ն գեղեցիկ էր շուրջը. ծառերը, թփերը, խոտը, մանուռը՝ ամեն ինչ ծածկված էր փափիկ ու փայլվում ձյունով: Իսկ ի՛նչ զվարճալի էր ընկերներով խաղալը: Նրանք գրլորվում էին ձյան վրա, չարաճճիորեն թաքնվում էին ձյան բլուրների մեջ, խաղում թեթև փաթիլների հետ: Նրանք այնքա՛ն նոր խաղեր հնարեցին...

### 2

Ձմեռային մի առավոտ Բենբին արթնացավ բարձր թըրխկոցներից: Նա վախեցած ցատկեց տեղից և տեսավ, որ շուրջը սարսափելի իրարանցում էր. կենդանիները սարսափած այս ու այն կողմ էին փախչում և կուչ գալիս առաջին պատահած թաքստոցում՝:

– Ի՞նչ է պատահել, – զարմացած հարցրեց Բենքին:

– Որս է, – պատասխանեց ինչ-որ մեկը:

Ամեն կողմից անընդհատ կրակոցներ էին լսվում, որոնք հետըզհետե մոտենում էին:

– Փախի՛ր, Բենքի, – ձայն տվեց մայր եղնիկը՝ դեպի անտառի խորքը նետվելով:

Բենքին ջանում էր հետ չընկնել մայրիկից: Սակայն վախենում էր նաև իր ընկերների համար. նա լսել էր, թե որքա՛ն կենդանիներ էին զոհվել անցյալ տարվա որսի ժամանակ: Ահա նորից հրացաններով մարդիկ անտառ են եկել ու խանգարել անտառի լուռ ու հանգիստ կյանքը:

Մայր եղնիկն իր վրա հրավիրեց որսորդների ուշադրությունը, որպեսզի փրկի Բենքին, և... զոհվեց:

Բենքին դառնորեն լալիս էր: Սակայն բոլոր ընկերները շըրջապատել էին Բենքին, խղճում էին և մխիթարում նրան:

Իսկ ծագուկ նապաստակը մոտեցավ ընկերոջը և ասաց.

– Բենքի, դու մենակ չես. մենք՝ քո ընկերները, միշտ քո կողքին կլինենք ու կօգնենք քեզ:

Բենքին գլուխը բարձրացրեց ու նայեց ընկերներին. նրա հայացքի մեջ անսահման երախտագիտություն<sup>2</sup> կար:



<sup>1</sup> Թաքսոոց – թաքնվելու՝ պահվելու տեղ

<sup>2</sup> Երախտագիտություն – ուրիշի արած բարի գործը հասկանալը և շնորհակալ լինելը





### Հարցեր և առաջադրանքներ

1. Անրատի բնակիչներն ինչպե՞ս ընդունեցին Բեմբին:
2. Չմեռը իր հետ ինչե՞ր բերեց:
3. Ի՞նչը սարսափ պատճառեց անրատի բնակիչներին. ինչո՞ւ:
4. Մայր եղնիկը ինչպե՞ս փրկեց իր ձագուկին:
5. Բեմբին ինչո՞ւ շնորհակալ եղավ ընկերներից:

### Ճանաչի՛ր և ճիշտ ծիպրու՛ւ.



### Գիտե՛ս, որ...

**1.** Երբ բառը չի տեղավորվում մեկ տողի վրա, նրա մի մասը տանում ենք հաջորդ տողը՝ **տողադարձ** ենք անում: Տողադարձ կարելի է անել միայն **բազմավանկ** բառերը: Բառը երկու մասի ենք բաժանում **վանկերով**:

նապաստակ →



նա



պաստակ



նապաս



տակ :

**2.** Գաղտնավանկի **ը**-ն տողադարձի ժամանակ գրվում է:

թաթնվել →



թաթ



նվել



թաթն



վել :

Դասի մեջ էլ կան գաղտնավանկի **ը** ունեցող բառեր, որոնք տողադարձ են արված. գտի՛ր դրանք:

	Արտագրի՛ր այս բառերը և տողադարձ արա բոլոր հը- նարավոր ձևերով.
<b>1.</b>	<p>ընկեր, շնորհավորել, թարմանալ, սարսափելի, անկյուն, անսահման, առավոտ, խանգարել, ծանոթանալ, կենդանի, հաճելի:</p> <p>Օրինակ՝ անկյուն – ան-կյուն, շնորհավորել – շնոր-հավորել, շնորհա-վորել:</p>
<b>2.</b>	<p>թռչուն, մտերմանալ, զվարճանալ, կծղակ, թաքստոց, կրա- կոց, հրացան, փայլփլուն, բլուր, մխիթարել, հետզհետե, շրջա- պատել:</p> <p>Օրինակ՝ բլուր – բը-լուր, հետզհետե – հե-տըզհետե, հետըզ-հետե, հետզհե-տե:</p>

Ըստ է. Սեթոն—Թոմփսոնի

### Ձմեռային քուն



Ուեբը փոքրիկ արջուկ էր: Մարդիկ սպանել էին նրա մորն ու եղբայրներին, և Ուեբն ամբողջ աշխարհում մենակ էր մնացել: Արդեն երեք ամիս էր անցել այդ սարսափելի օրվանից, և նա տխուր թափառում էր անտառում. մենակ էր կեր փնտրում, մե-  
նակ էր պաշտպանվում թշնամիներից:

Եղանակը գնալով ցրտում էր: Այլևս ո՛չ ծառերի փչակում մեղր կար, ո՛չ էլ թփերի վրա՝ հատապտուղ: Վայրի խնձորի ու տանձի ծառերը վաղուց արդեն մերկացել էին:

Ուեբը դեսուդեն ընկավ, ման եկավ և անտառի խորքում՝ հին կաղնու տակ, մի մեծ փոս գտավ: Փոսի մեջ չոր տերևներ ու ծյուղեր հավաքեց: Ապա քարշ տվեց երկու եղևնի, որոնք ան-  
ցած գարնանը փոթորկից շուռ էին եկել, և դրանցով ծածկեց

փոսը: Հետո չոր ճյուղեր բերեց ու խնամքով փակեց բոլոր ճեղքերը: Որջը պատրաստ էր:

Եվ ահա մի օր, երբ ուժեղ քամի բարձրացավ, և ծյուն տեղաց, Ուեբը մտավ իր որջը, կուչ եկավ ու քնեց: Մրրիկը՝ ուժեղանում էր, ծյունը՝ գալի՛ս ու գալի՛ս: Նստում էր ծառերի ճյուղերին, ճյուղերը ծյան ծանրությունից ճկվում<sup>2</sup> էին. հետո քամին թափ էր տալիս ծյունը, և ճյուղերը նորից սկսում էին ծածկվել ծյունով: Ձյունը կիտվում<sup>3</sup> էր լեռներում, ձորերում: Այսպես Ուեբի որջի վրա մի ամբողջ թունբ առաջացավ: Ձյունը լավ պաշտպանում էր ցրտից:

Եվ Ուեբը շուտով քուն մտավ: Հաստ մորթին լավ մուշտակ էր: Ծարպի հաստ շերտը մուշտակի համար լավ աստառ էր, իսկ արջի համար՝ սնունդ. չէ՞ որ ամբողջ ձմռան ընթացքում նա այդ ճարպով էր սնվելու:

Բոլոր արջերի նման Ուեբն էլ քնեց ամբողջ ձմեռ: Իսկ երբ գարունը եկավ, և Ուեբն արթնացավ, հասկացավ, որ շատ երկար էր քնել ու շատ քաղցած էր:

Պետք էր դուրս գալ՝ կեր որոնելու...

<sup>1</sup>մրրիկ - փոթորիկ

<sup>2</sup>ճկվել - թեքվել ծռվել

<sup>3</sup>կիտվել - դիզվել՝ մի տեղ հավաքվել




### Հարցեր և առաջադրանքներ




1. Ուեբը ինչպե՞ս նախապատրաստվեց ձմռանը:
2. Պատմի՛ր՝ ի՞նչ նոր բաներ սովորեցիր արջի մասին:

Ճանաչի՛ր և ճիշտ ծիպրու։



մեղու  
արագի  
արջ  
սկյուռ




Գիպե՛ս, որ...

Տողադարձի ժամանակ **և**-ը կարող է մնալ մեկ վանկի մեջ (**և**) կամ բաժանվել երկու վանկերի միջև (**ե-վ**) :

Օրինակ՝



Արևիկ  
Ա-րևիկ



Արևիկ  
Արե - վիկ

Տողադարձ արա հետևյալ բառերը և գրի՛ր երկու սյու-  
նակով՝ օրինակի պես.

բարև, տերև, Սևան, Գևորգ, վերև, թեթև, հևալ, Սևակ, Տաթև,  
Լևոն, Եվա, նաև, ձևել, անձրև:



բա-րև

Օրինակ՝



հե-վալ

**Ձմեռ**

Պարուն է քամին դաշտերի վրա,  
Դաշտերի վրա մաղուն է ձյուն.  
Ճերմակ թաթին սև դնչիկը դրած՝  
Մրսուն է շունը ու լուռ թախծուն:

Եվ ճնճղուկները էլ չեն ծվվում,  
Պահվել են խոտի դեզերի մեջ,  
Եվ աղբյուրները էլ չեն գլգլում,  
Չեն երգում կանաչ ձորերի մեջ...

Բայց մանուկները չեն տխրում ցրտից,  
Նրանք ուրախ են ձմռան համար,  
Որ սահնակներով դեռ առավոտից  
Սահում են ահա բլուրն ի վար:

Ձյունը փափուկ է ու տաք է անգամ,  
Երբ դու խաղում ես ձյունների մեջ.  
Ձյունը հալչում է շնչից մանկական,  
Գարունն է ժպտում ձյունների մեջ:



աղբյուր  
ցայրաղբյուր



**Հարցեր և առաջադրանքներ**

1. Ինչե՞րն են տխրում ձմռանը. ինչո՞ւ:
2. Իսկ մանուկները տխո՞ւր են, թե՞ ուրախ ձմռան համար. ինչո՞ւ:
3. Ի՞նչ միտք է արտահայտված վերջին երկու տողերի մեջ:



## Հանելուկներ

Եկալ, բերեց առար ձյուն,  
Դաշտը ծածկեց վերնակով,  
Փողոց, տանիք, ծառ ու տուն  
Ներկեց արծաթ-ձերմակով:



Գալիս եմ փափուկ,  
Գնում եմ գաղտնուկ.  
Մեծերին պաղ եմ,  
Փոքրերին խաղ եմ:


Տողադարձ արա հետևյալ բառերը բոլոր հնարավոր ձևերով.

*սերկկի, Երևան, Իջևան, արևածագ, բարևել, եղևնի, երևալ, կարևոր, տերևաթափ, սևանալ, հարևան, թևավոր:*

Օրինակ՝ *արևածագ - ա-րևածագ, արե-վածագ, արևա-ծագ:*



## Խաչքառ



## Ըստ Հայկ Վարդանյանի

## Եղևնի



Մի փոքրիկ աղջիկ նստած էր նրբանցքում՝ կիսավեր<sup>2</sup> պատի վրա՝ հնամաշ վերարկուի մեջ փաթաթված:

– Եղևնի՛, եղևնի՛, Նոր տարվա համար եղևնի՛, – ժամանակ առ ժամանակ լսվում էր նրա թույլ ձայնը:

Բայց, չգիտես ինչու, դուրս չէր գալիս փողոց, որտեղ հեշտությանը կվաճառեր եղևնին, այլ նստել էր նրբանցքում, որտեղ անցորդները շատ քիչ էին:

Մի քանի օր շարունակ քամին երկինքը փակած ամպերից

դժվարությամբ մանր փաթիլներ էր պոկում և թափում ցած:

– Չապա մի ցոլոց տուր եղևնիդ, – ասացի ես:

Նա շրջվեց բակի կողմը և ասաց.

– Այ սա է:

– Բայց այդ ի՞նչ է, դեռ կտրված չէ՞:

– Ո՛չ, ես հիմա սղոցը կբերեմ, – ասաց նա, իջավ պատից ու գնաց դեպի բակի խորքի տնակը:

Նա վերադարձավ՝ մի փոքր և ժանգոտ սղոց ձեռքին: Ապա մի աղերսող՝ հայացք գցելով վրաս՝ ասաց.

– Գիտե՞ք... հայրս է տնկել այս եղևնին, նրա հիշատակն է:

– Իսկ մի՞թե հայրիկիդ որևէ բան է պատահել:

– Նա երկու տարի առաջ է մահացել:–

Ապա բթամատը և ցուցամատը իրարից հեռացնելով՝ շարունակեց. – Ե՛հ, այսքան փոքր էր եղևնին, երբ հայրս բերեց... Իսկ հիմա տեսե՛ք՝ որքա՛ն է մեծացել, իմ հասակին է:

Նրա նիհար ու ցրտից կապտած դեմքը փայլեց: Դա երջանկության այնպիսի հուզիչ և նուրբ արտահայտություն էր, որն ավելի շատ տխրեցնում էր դիտողին, քան ուրախացնում:

– Գիտե՞ս ինչ, – ասացի ես, – թող մնա, մի՛ կտրիիր հորդ հիշատակը:

– Ինչպես ուզում եք, – ասաց նա՝



երախտագիտության մի հայացք գցելով ինձ վրա: Ապա նորից բարձրացավ պատին ու փաթաթվեց վերարկուի մեջ:

Հիմա նրա դեմքը նորից խաղաղ էր: Երբ ես մի փոքր հեռացել էի, լսեցի նրա մանկական ձայնը.

– Եղևնի՛... եղևնի՛, Նոր տարվա համար... եղևնի՛...

Նա դեռևս չէր նկատել այն մետաղադրամը, որը ես կամացուկ սահեցրել էի նրա գրպանը:

<sup>1</sup>Նրբանցք - փոքր փողոց, որը բացվում է գլխավոր փողոցի վրա

<sup>2</sup>Կիսավեր - կիսով չափ ավերված՝ քանդված

<sup>3</sup>աղերսել - շատ խնդրել



### Հանկուկ

Կանաչ ուսերիս  
Չյուն կա սպիտակ,  
Բայց ես գարուն եմ  
Այդ ձյուների տակ:



### Հարցեր և առաջադրանքներ

1. Աղջիկը ինչո՞ւ էր վաճառում իր եղևնին:
2. Նա ինչո՞ւ դեռ չէր կտրել ծառը:
3. Ինչպիսի՞ մարդ էր անցորդը. ինչո՞ւ ես այդպես կարծում:
4. Աղջիկը ի՞նչ պիտի զգա, երբ նկատի գրպանի դրամը:



Տանը կարդացե՛ք Նանս Զրիստիան Անդերսենի «Աղջիկն ու լուցիկները» հուզիչ հեքիաթը:



### Իսկ դու կարո՞ղ ես քո մասին ասել.


Ես ծնողասեր եմ:

այո՛

ո՛չ



Ես գթասիրտ եմ:

Տողադարձ արված հետևյալ բառերը գրի՛ր ամբողջական ձևով.

բարե-վել, Սե-վան, Երե-վան, սերկե-վիլ, եղրե-վանի, հարե-վան, Լե-վոն, Արե-վիկ, Ե-վա, տերե-վաթափ, արե-վածագ, թե-վավոր, սե-վանալ:

Օրինակ՝ եղրե-վանի – եղրևանի:



### Օրացույց

Ինչքա՛ն օրեր կան քո գրկում պահված՝  
 Կանաչ ժպտով, խինդով ողողված...  
 Անձրևից ծնված ծաղիկներ ցողոտ,  
 Փոշոտ թիթեռներ, գիշերներ աղոտ<sup>1</sup>:  
 Քո նուրբ թերթերում՝ ոսկեհասկ ամառ,  
 Արևոտ մանուկ ու զով Վարդավառ<sup>2</sup>:  
 Եվ աշնանաբույր քամի հեհիհ,  
 Ծառերից կաթող մրգեր ու տերև:  
 Փաթիլվող, ձյունոտ Նոր տարի ճերմակ,  
 Որ դու պահել ես վերջին թերթիդ տակ...  
 Օրերդ հերթով անցնում են, ծնվում  
 Եվ այդպես անվե՛րջ, անվե՛րջ կրկնվում:



<sup>1</sup>աղոտ – ոչ պարզ

<sup>2</sup>Վարդավառ – տոն, որի ժամանակ ջուր են շաղ տալիս իրար վրա



#### Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձի՛ն, ուշադիր կարդա՛ և սասա՛՝ ուրանավորի ո՞ր գույգ տողերի մեջ տարվա ո՞ր եղանակն է նկարագրվում:
2. Կարդա՛ այն պատկերները, որոնց միջոցով նկարագրվում է յուրաքանչյուր եղանակ:  
 Փորձի՛ր նկարել տարվա եղանակներից որևէ մեկը՝ ըստ բանաստեղծության համապատասխան պատկերի:

Ինչ  
 Ինչու-իչուն

#### Գիտե՛ս, թե՛ չգիտես...

Տարվա եղանակները և նրանց ամիսները՝

**գարուն**

մարտ  
 ապրիլ  
 մայիս

**ամառ**

հունիս  
 հուլիս  
 օգոստոս

**աշուն**

սեպտեմբեր  
 հոկտեմբեր  
 նոյեմբեր

**ձմեռ**

դեկտեմբեր  
 հունվար  
 փետրվար



### Հաներուհներ

Նա ցույց կտա  
Օրը քեզ,  
Մի թերթիկը  
Թե պոկես:



Ծնվում է գեղ  
Ու նիհարում  
Օր օրի,  
Կմահանա,  
Երբ որ փարին  
Բոլորի՛:



Երբ լրացավ  
Երեսուն օրը,  
Իր ճամփան գիջեց  
Նաջորդ եղբորը:  
՝բոլորել – ավարտել

Բանաստեղծությունից դուրս գրիր չորս եղանակները բնութագրող բառակապակցությունները և յուրաքանչյուր խմբից մեկ բառակապակցություն գործածիր նախադասության մեջ:

### Վ. Սուլբեև



### Ձնեմարդը

(հեքիաթ)

1

Փոքրիկները նայեցին օրացույցին. վաղը Նոր տարի էր, իսկ իրենք եղևնի չունեին: Մի քիչ մտածելուց հետո նրանք որոշեցին նամակ գրել Ձնեռ պապիկին և նրանից մի գեղեցիկ, փարթամ՝ եղևնի խնդրել:

Արբելի՛ Ձմեռ պապ, շաք տե՛՛ք խնորրու՛մ՝ նոր փարվա  
համար մե՛կ մի գեղեցիկ եղևնի ուղարկե՛՛ք: Խսկ փունճա-  
ռի խաղալիքները մե՛նք մե՛ք չեմք ո՛վ կպարասսրե՛նք:

Նչա նամակը Ձե՛ս կրերի Ձնեմարդու՛կը:

Նախապես շնորհակալություն տե՛՛ք հայրնու՛մ:

մի խումբ երեխաներ

Երեխաները գրեցին նամակը և վագեցին բակ՝ Ձնեմարդ պատրաստելու: Նրանք բոլորով համերաշխ աշխատեցին ու մի

գեղեցիկ Ձնեմարդուկ պատրաստեցին՝ գազարե քթով և ածխե աչուկներով: Երեխաներն իրենց նամակը դրեցին Ձնեմարդու ձեռքի մեջ ու շատ-շատ խնդրեցին, որ այն հասցնի Ձմեռ պապիկին:

Իջավ երեկոն. երեխաները գնացին տուն, իսկ Ձնեմարդը բակում մենակ մնաց:



**2**

– Երեխաներն ինձ շատ կարևոր հանձնարարություն են տրվել, – բարձրաձայն ասաց Ձնեմարդուկը, – իսկ ես չգիտեմ, թե որտե՛ր կարող եմ գտնել Ձմեռ պապիկին:

– Եթե ինձ քեզ հետ վերցնես, ես կօգնեմ ճանապարհը գտնելու, – հանկարծ լսվեց բակում ապրող փոքրիկ շնիկի ձայնը:

– Ուրեմն՝ շարժվե՛նք, ժամանակ չկա:

Նրանք երկար քայլեցին, մինչև հասան անտառի խորքը:

– Դու գիտե՞ս, թե որտե՛ր է ապրում Ձմեռ պապը, – հարցրեց Ձնեմարդուկը փոքրիկ նապաստակին, որը վախեցած այս ու այն կողմ էր նայում:



Բայց նապաստակը պատասխանելու ժամանակ չուներ. նա փախչում էր աղվեսից: Շնիկը վազեց նապաստակի հետևից, ու Ձնեմարդը մենակ մնաց: Քիչ հետո ձնաբուք սկսվեց: Ձնեմարդը դողաց, դողդողաց և մասերի բաժանվեց:

Աղվեսը, որ փնտրում էր նապաստակին, հոտոտեց ծյունը, գրտավ նամակն ու վազելով հեռացավ:

Վերադարձավ շնիկը և ծյունների մեջ չգտավ Ձնեմարդուն: Նրանից մնացել էին ածուխները, դույլը և գազարը: Շնիկը նստեց ձնաթմբի վրա և տխուր կաղկանձեց՝

### 3

Շնիկի ծայրը լսելով՝ հավաքվեցին նապաստակներն ու սկյուռիկները: Նրանք, ձնագնդեր գլորելով, նորից ոտքի կանգնեցրին Ձնեմարդուկին. ի՛նչ ուրախություն էր:

Ձնեմարդուկը նապաստակների ու սկյուռիկների հետ ուղեվորվեց՝ արջուկին արթնացնելու. միայն նա՝ կարող էր ցույց տալ Ձնեմարդուկի տան ճանապարհը:

– Բայց Ձնեմարդուկը քեզ ոչ մի եղևնի էլ չի տա՝ առանց նամակի, – ասաց արջը:



– Ահա՛ և նամակը, – այդ պահին ուրախ-ուրախ վրա բերեց կաշաղակը՝ կտուցից ցած գցելով մի ծրար. – մինչև աղվեսն ու գայլը իրար գգու՛մ էին այս նամակի համար, ես այն փախցրի:

Բոլորն ուրախացան և շտապ ուղևորվեցին Ձմեռ պապի մոտ:

– Բայց ինչո՞ւ ես այսքան ուշացել. դու այլևս չես կարող ժամանակին տեղ հասցնել եղևնին, – անհանգստացավ Ձմեռ պապը:

Երբ կենդանիները պատմեցին նրան, թե ի՞նչ արկածներ՝ է ունեցել Ձմեռարդուկը, Ձմեռ պապը որոշեց նրան իր սահնակով ուղարկել:

Առավոտյան Ձմեռարդը դարձյալ կանգնած էր բակում, սակայն նամակի փոխարեն նրա ձեռքում մի շքեղ եղևնի կար:

<sup>1</sup>փարթամ – այստեղ՝ առատ ճյուղերով

<sup>2</sup>կաղկանձել – ցավից՝ վշտից ուժեղ ոռնալ

<sup>3</sup>արկած – անակնկալ դեպք




Ձյուն  
չնե՛մարք  
չնագնդի



### Հարցեր և առաջադրանքներ

1. Երեխաներն ի՞նչ նամակ գրեցին Ձմեռ պապիկին. ինչո՞ւ:
2. Պատմի՛ր՝ Ձմեռարդն ի՞նչ արկածներ ունեցավ անտառում:
3. Նա ինչի՞ շնորհիվ կարողացավ իրականացնել երեխաների խնդրանքը:
4. Փոքրի՛կ, դո՛ւ էլ նամակ գրիր Ձմեռ պապիկին և արդասալյո՛րի քո խնդրանքն ու ցանկությունները:

 Տանը կարդա՛ «Արջուկները» հեքիաթը:



### Գիպե՛ս, թե՛ չգիպես...

Տարբեր երկրներում Ձմեռ պապին տարբեր անուններով են կոչում. Ֆրանսիայում նրան կոչում են **Պեր Նոել**, Գերմանիայում և Անգլիայում՝ **Սանտա Կլաուս**, Ռուսաստանում՝ **Դեդ Մորոզ**, Նախաստանում՝ **Ձմեռ պապ** կամ **Կադսնդ պապ**...



## Հանելուկներ

Նրա ծնունդը  
Աշխարհն իմացավ,  
Երբ նույն վայրկյանին  
Տնից փուն անցավ:



Բազմած սառցե սահնակին՝  
Տարին մեկ հյուր է գալիս,  
Խաղալիքներ շալակին՝  
Բոլորիս փուն է գալիս:



## Նիշո՞ւմ ես, որ...

Տնչյունների այն խումբը, որն իմաստ է արտահայտում,  
կոչվում է **բառ**:

Համեմատի՞ր՝ տնու - տուն:

<b>1.</b>	Տրված հնչյունների խմբերը դասավորի՞ր այնպես, որ բառ ստանաս.
	<i>մռեծ, զագար, նմակա, թիք, խածու, ձեռք, խիղալաք, աջր, շնու, մրադ, ավդես, եղնկի:</i>
<b>2.</b>	Հետևյալ բառերից յուրաքանչյուրի համար գրի՞ր հակառակ և նոտ իմաստն ունեցող մեկական բառ.
	<i>գեղեցիկ, փոքրիկ, ուրախ, կամաց, մեծ, ուղիղ, քաղցր, ժիր, անվախ, ջինջ:</i>  Օրինակ՝ <i>կամաց - արագ - դանդաղ:</i>
<b>3.</b>	Ընդհանուր իմաստ ունեցող հետևյալ բառերից յուրաքանչյուրի համար գրի՞ր նրա մասնավոր իմաստներն ունեցող բառերը.
	<i>ծառ, կահույք, հագուստ, սպասք, նվագարան:</i>  Օրինակ՝ <i>հագուստ - գուլպա, վերնաշապիկ, բաժկոն, վերարկու, գլխարկ, ձեռնոց, հողաթափ...</i>



## Ձյունոտ պար

Մտքով անտառ գնացի,  
 Մի եղևնի բերեցի՝  
 Թշիկներով իր կանաչ,  
 Փշիկներով իր կանաչ.  
 Ձյուն շաղ տվի ես վրան,  
 Խաղալիքներ կախեցի,  
 Անձրևիկներ մաղեցի.  
 Ձմեռ պապն էր լուռ նստած՝  
 Նապաստակը գիրկն առած:  
 Ու եղևնին իմ դալար  
 Դարձավ ձյունոտ կանաչ պար:  
 Հազար գույն էր նա առել,  
 Իմ սենյակը զարդարել,  
 Ժպիտներով ձյունավառ  
 Դարձել զնգուն տոնածառ:



Կարդ  
 Կարդարել



### Հարցեր և առաջադրանքներ

1. Պարմի՞ր՝ փոքրիկը մտքով ի՞նչ երազանք իրականացրեց:
2. Դո՞ւ ինչ ես երազում անել Նոր տարուն:
  - ա) Բանասարեղծության միջից դո՞րս գրիր պարկերավոր բառակապակցությունները:
  - բ) Փորձի՞ր նկարել փոքրիկի կամ քո երազած տոնածառը:
  - գ) Սովորեցե՞ք և երգեցե՞ք «Նոր տարի» երգը:



### Հանրույ

Ժպիտն է կանաչ  
 Ձյունին թե տապին՝,  
 Նա չի մերկանում  
 Տերևաթափին: 'տապ – սաստիկ շոգ





Փոքրիկ, ուշադիր դիտիր նրկարը. նկատեցի՞ր, որ ինչպես ծառը իր ճյուղերով ունի **արմար**, այնպես էլ նույն ընտանիքի մեջ մտնող բառերն ունեն իրենց ընդհանուր մասը՝ **արմարը**, որից էլ առաջացել են այդ բառերը:

Ճյուղ-բառերի հիմնական իմաստն արտահայտող ընդհանուր մասը **հայր** բառն է:

### Գիտե՛ս, որ...

**Բառի հիմնական իմաստն արտահայտող մասը կոչվում է **արմար**:**



Նույն արմատն ունեցող բառերը գրի՛ր առանձին խմբերով և ընդգծի՛ր արմատները.

*ընկերական, գործիք, ընկերուհի, երգարան, համերգ, ընկերություն, երգիչ, գործարան, անգործ, գործիչ, ընկերաբար, գործավոր, երգեցիկ:*

## Էմիլյա Օհանյան

### Հրաշք գիշեր

#### 1



Լուռ գիշեր էր, մութ գիշեր. բացօթյա վայրում գտնվող հովիվները, կրակի շուրջը հավաքված, իրենց հոտն էին պահպանում:

Հովիվներից մեկի փոքրիկ տղան հյուր էր եկել. ուզում էր հովիվների հետ կրակի շուրջը նստել և լսել նրանց հետաքրքրական պատմությունները:



Տղան, դժվարությամբ զսպելով քունը, իր գըրկուն տաքացնում էր նորածին գառնուկին:

Հանկարծ երկինքը լուսավորվեց, և ճերմակ-ճերմակ հագուստներով հրեշտակներ սկսեցին սավառնել օդում:

Տղան ցատկեց տեղից և ձեռքը մեկնելով երկինք՝ գոչեց.

– Հայրի՛կ, հայրի՛կ, նայի՛ր, ի՛նչ հրաշք է...

Հովիվները նույնպես ոտքի ելան. հրեշտակները մի չքնաղ երգ էին երգում.

– *Փա՛նք Աստծուն երկնքում, երկրի վրա խաղաղություն...:*

Հրեշտակներից ավագը մոտեցավ, բացեց իր գեղանի՝ թևերը և ասաց.

– Մի՛ վախեցեք, որովհետև ես ձեզ բարի լուր՝ *ավերիս* եմ բերել. այսօր Բեթղեհեմ քաղաքում ծնվեց մեր Փրկիչը: Դուք մսուրի մեջ խանձարուրով՝ փաթաթված մի մանուկ կգտնեք:

## 2

Երբ հրեշտակը երկինք բարձրացավ, նրա հետևից փայլեց մի աստղ. հովիվները հասկացան, որ այդ աստղը մսուրի ճանապարհը գտնելու նշան է: Եվ շտապելով գնացին աստղի ցույց տված ճանապարհով: Աստղը կանգնեց մսուրի վրա, որտեղ ծնվել էր մանուկ Հիսուսը:

Հովիվները ներս մտան, տեսան Աստվածա-





մայր Մարիամին և խանձարուրի մեջ պառկած մանուկ Հիսուսին, որն իր գլխին ուներ լուսե պսակ: Նրանք ծնկի եկան նորածին մանկան առջև և երկրպագեցին<sup>3</sup> նրան: Իսկ փոքրիկ տղան գառնուկը ուրախությամբ նվիրեց մանուկ Հիսուսին:

Փայլուն աստղի առաջնորդությամբ Բեթղեհեմ եկան նաև մոզերը՝ իմաստունները: Նրանք ևս երկրպագեցին մանուկ Հիսուսին ու թանկագին նվերներ մատուցեցին նրան:

Սիրելի՛ փոքրիկ, դու գիտես, որ Նոր տարին նշում ենք հունվարի 1-ին: Ամանորը կրկնակի տոն է մեզ համար. այդ օրերին՝ հունվարի 6-ին, նշում ենք նաև Հիսուս Քրիստոսի ծննդյան տոնը՝ *Սուրբ Ծնունդը*, և իրար հանդիպելիս *ավերիս* ենք տալիս՝ ասելով.

– *Քրիստոս ծնվեց և հայրնվեց. ձեզ և մեզ մեծ ավերիս:*

Պատասխանը լինում է.

– *Օրհնյալ է ծնունդը Քրիստոսի:*

Փոքրիկ, մե՛ծ ու շա՛տ գեղեցիկ տոն է *Սուրբ Ծնունդը*:




<sup>1</sup> **գեղանի** – չքնաղ՝ շատ գեղեցիկ

<sup>2</sup> **խանձարուր** – բարուր՝ նորածին երեխային փաթաթելու սավան

<sup>3</sup> **երկրպագել** – ծնկի գալով՝ խոնարհվելով ողջունել



### Հարցեր և առաջադրանքներ



1. Փոքրիկ տղան ի՞նչ հրաշք տեսավ:
2. Ի՞նչ ավերիս տվեցին հրեշտակները:
3. Նովիվներն ու մոզերը ինչպե՞ս գտան մսուրի ճանապարհը:
4. Փոքրիկն ինչպե՞ս մասնակցեց այդ ուրախությանը:
5. Ե՞րբ ենք տոնում Սուրբ Ծնունդը և ինչպե՞ս ենք շնորհավորում միմյանց:



**ա)** Գունավորի՛ր այն մսուրը, որտեղ ծնվեց մանուկ Նիսուսը:  
**բ)** Սովորեցե՛ք «**Լուռ գիշեր**» երգը և Սուրբ Ծնունդի գիշերը այն երգելով՝ անակնկալ նվե՛ր մատուցե՛ք ներկաներին:



### Գիտե՞ս, թե՞ չգիտես...

Տոնածառի ամենաշքեղ զարդը գագաթի փայլուն ասպղնձ է. այն խորհրդանշում է Բեթղեհեմի ասպղը, որը Նիսուսի ծննդյան գիշերը մոզերին դեպի մսուր առաջնորդեց:

Կարդա՛ և փորձի՛ր բացատրել տրված երկու շարք բառերի իմաստները. ուշադրություն դարձրու՝ ի՞նչ մասնիկներ են ավելացել երկրորդ շարքի բառերի վրա.

սեղան – սեղանիկ  
բալ – բալենի  
դպրոց – դպրոցական

աշակերտ – աշակերտուհի  
գոհ – դժգոհ  
դաս – դասարան



### Գիտե՞ս, որ....

Այն մասնիկը, որն ավելանում է բառի սկզբից կամ վերջից և նոր իմաստ է տալիս նրան, կոչվում է **ածանց**: Ածանց ունեցող բառը կոչվում է **ածանցավոր բառ**:

<b>1.</b>	Արտագրի՛ր հետևյալ բառերը՝ առանձին - առանձին գրելով արմատներն ու ածանցները.
	<p>մայրիկ, մայրենի, մայրաբար, մայրություն, քաղցրեղեն, քաղցրություն, անտուն, տնակ, տնային, անտառային, անտառոտ, քաջաբար, քաջություն, քարե, քարոտ, քարեղեն, ջրային, անջուր, ջրիկ, ջրոտ:</p> <p>Օրինակ՝ անտուն – ան + տուն:</p>
<b>2.</b>	Արտագրի՛ր և ընդգծի՛ր հետևյալ բառերի ածանցները.
	<p>անվախ, օդային, թռչնակ, անհնազանդ, դժգույն, հնազանդություն, գետակ, կաթնեղեն, տանձենի, նոնենի, քույրիկ, ննջարան, անխելք, ընկերական, բժշկուհի, նկարիչ, խմորեղեն:</p> <p>Օրինակ՝ անխելք, կաթնեղեն:</p>

## Գզգզված ճնճուկը

(հեքիաթ)

1

Երեկո էր: Ձյունը հանդարտ իջնում էր քաղաքի վրա: Այնքան լուռ էր, որ թվում էր, թե շուրջը ամեն ինչ քնած է: Պատուհանի մոտ կանգնած՝ Մաշան կախարդված հետևում էր ձյան խոշոր, թեթև փաթիլներին, որոնք իրենց հետ լռութուն էին բերում աշխարհին:

Պատուհանի դիմաց՝ ծառի ճյուղին նստած գող ագռավն անթարթ նայում էր Մաշային: Ամեն երեկո տատիկը սենյակն օդափոխելու համար բացում էր օդանցքը և Մաշային ուղեկցում լվացվելու: Ագռավը օդանցքից ներս էր թռչում և սենյակից որևէ բան թռցնում՝ սեղանի վրա թողնելով թաց ճանկերի հետքերը: Եվ տատիկն ամեն անգամ բարկանում էր ագռավի վրա:

«Ջետաքրքիր է, – մտածեց Մաշան, – այս մեծ ագռավն ինչպե՞ս է ներս մտնում այս փոքրիկ օդանցքից»: Ապա բարձրացավ աթոռին, կամացուկ բացեց օդանցքն ու թաքնվեց պահարանի հետևում: Ձյան փաթիլները, իրար հերթ չտալով, օդանցքից ներս էին լցվում ու հալչում օդում: Ջետո հանկարծ ճռռոց լսվեց, ու

Մաշան տեսավ, թե ինչպե՞ս ագռավը թռավ դեպի մայրիկի զարդասեղանը, կտուցով վերցրեց փոքրիկ ապակյա ծաղկեփունջը և անհետացավ գիշերվա խավարում: Մաշան հասցրեց միայն ճչալ...

2

Մայրիկը լալիս էր. ախր ապակյա զարդը տարիներ առաջ հայրիկն էր նրան նվիրել: Նա խնդրել էր, որ երբ մայրիկը ելույթ ունենա «Մոխրոտրը» բալետում,





ծաղկեփունջն անպայման ամրացնի Մոխրոտի պարահանդեսային հագուստի վրա: Իսկ «Մոխրոտի» առաջին ներկայացումը վաղն էր լինելու...

Մաշան իրեն մեղավոր էր զգում...

Առավոտյան եկավ Պաշկան: Պաշկան մի փոքրիկ ճնճղուկ էր՝ Մաշայի

ընկերը: Մաշան վիրավոր ու սառած ճնճղուկին փողոցում էր գտել: Տուն էր բերել, կերակրել ու խնամել էր նրան: Հիմա նա ամեն առավոտ գալիս էր Մաշայի մոտ՝ կերակրվելու և տաքանալու: Սովորականի նման այսօր էլ Պաշկան կերավ հացի փշրանքներն ու տեղավորվեց ժամացույցի վրա՝ տաքանալու և մի քիչ ննջելու:

Տատիկն ու Մաշան հուզված գրուցում էին: Պաշկան լսեց կատարվածի մասին ու փափլիկ գնդակի նման դուրս թռավ օդանցքից: Նա անմիջապես գլխի ընկավ, թե ի՞նչ ագռավի մասին էին խոսում Մաշան ու տատիկը...

### 3

Թատրոնում սկսվում էր ներկայացումը: Մաշան առաջին անգամ էր ելել մայրիկի ներկայացմանը. ամեն ինչ այնքան խորհրդավոր էր...

Հնչեց երաժշտությունը, բացվեց բեմի վարագույրը, և Մաշան հայտնվեց հեքիաթի աշխարհում...

Ավարտին էր մոտենում ներկայացումը: Լսվում էին կախարդական երաժշտության վերջին հնչյունները: Հեքիաթում ամեն ինչ լավ էր ավարտվում, սակայն հանդիսատեսը չէր կարողանում հասկանալ,



թե Մոխրոտի աչքերից ինչո՞ւ էին արցունքներ գլորվում:

Հանկարծ դահլիճի օդանցքից ներս սուրաց մի զգզված ճնճղուկ՝ կտուցին փայլվիլուն մի իր: Նա երկու անգամ պտտվեց բեմի վրա, ապա թռավ դեպի Մոխրոտը և նրա ափի մեջ դրեց ապակյա ծաղկեփունջը:

Պաշկան էր, որ հավաքել էր ընկեր ճնճղուկներին և ազահ ու գող ագռավից կռվելով խլել էր մայրիկի զարդը:

Մոխրոտի դեմքին փայլում էր երջանիկ ժպիտը:

Մաշան ցատկոտում էր ուրախությունից, իսկ տատիկը լալիս էր հուզմունքից...

Ապշած դահլիճը թնդում էր ծափերից, իսկ Պաշկան, փքված ու հպարտ, թևերը թափահարելով և ուրախ ճռվողելով, պըտըտվում էր Մոխրոտի գլխավերևում...



օր  
օրանկյժ



### Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էր հուզվել մայրիկը:
2. Պաշկա ճնճղուկն ինչո՞ւ որոշեց օգնել Մաշային:
3. Դու կուզենայի՞ր, որ այս հեքիաթային պատմությունը իրական լիներ. դո՞ւ էլ փորձիր հորինել նման մի պատմություն:
4. Կարդա՛ ձմեռային երեկոն նկարագրող տողերը:
  - ա) Դասից ընտրի՞ր և գրի՞ր ձյունը նկարագրող արտահայտություններն ու պարկերները:
  - բ) Եթե հնարավոր լինի, անպայման դիտեցե՛ք «Մոխրոտը» հեքիաթ-բալետը կամ լսեցե՛ք նրա երաժշտությունը:



### Իսկ դու կարո՞ղ ևս քո մասին ստել.

Ձմռանը ես քաղցած չեմ թողնում թռչուններին:  
 Ես կենդանիների և թռչունների բարեկամն եմ:

այո՞	ո՞չ
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Կարդա՛ր հետևյալ երկու շարք բառերը և ուշադրություն դարձրու՝ ածանցները բառի սկզբո՞ւմ են, թե՞ վերջում.



անհամ  
անվախ  
դժգույն  
դժբախտ  
չտես

մայրիկ  
պահարան  
կախարդական  
կարճիկ  
պարուհի



**Գիտե՞ս, որ....**




**Բառի սկզբից ավելացող ածանցը կոչվում է նախաածանց:**  
**Բառի վերջից ավելացող ածանցը կոչվում է վերջածանց:**

<p><b>1.</b></p>	<p>Կազմի՛ր ածանցավոր բառեր՝ – <b>ուհի</b>, – <b>իչ</b>, – <b>ային</b>, <b>ան</b> – ածանցներն ավելացնելով հարմար բառերի վրա.</p>
	<p><i>ընկեր, նկար, գիր (գր), դաշտ, հեքիաթ, Տիգրան, հերոս, հայ, երգ, ծով, ձմեռ, տուն (տն), կիրթ, թև, դերձակ, խիղճ:</i> Օրինակ՝ <i>Տիգրան – Տիգրանուհի:</i></p>
<p><b>2.</b></p>	<p>Կազմի՛ր ածանցավոր բառեր՝ – <b>ավոր</b>, – <b>ություն</b>, – <b>իկ</b>, <b>դժ</b> – ածանցներն ավելացնելով հարմար բառերի վրա.</p>
	<p><i>բախտ, երկար, գոհ, պոչ, անուշ, քաղցր, գիտուն, բարձր, թև, չար, գույն:</i> Օրինակ՝ <i>բախտ-դժբախտ, բախտավոր:</i></p>
<p><b>3.</b></p>	<p>Պատմության 3-րդ մասից գտի՛ր գաղտնավանկի <b>ը</b> ունեցող տասը բառ և տողադարձ արա բոլոր հնարավոր ձևերով:</p>

**Թեմայի ամփոփում**

\* **ա)** Դու երբևէ հեղրե՞լ ես ձյան փաթիլներին. փորձի՛ր նկարագրել այդ տեսարանը. կարող ես օգտվել նաև «**Չյունների թագավորության մեջ**» թեմայի դասանյութերում տեղ գտած արտահայտություններից ու պատկերներից:

 **բ)** Տրված նկարների շուրջ հորինի՛ր մի փոքրիկ պատմություն կամ հեքիաթ՝ «**Կորած ձեռնոցը**» վերնագրով:

# ԼԱՎ ՈՒ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐ



Արև լինեմ,  
Արևեմ,  
Մեծից փոքրին  
Բարևեմ:  
Լույս Կամ լույսի  
Կարոտին,  
Անուշ բուրմունք՝  
Արոտին:  
Այրեմ մթան  
Փեշերը,  
Ցերեկ դարձնեմ  
Գիշերը:  
Շողքս փռեմ  
Մայր հողին՝  
Բերք ու բարիք  
Ծնողին:



## Շունը աչքերով էր խոսում



Ամառային շոգ օր էր: Հովիկը մայրիկի հետ սպասում էր ավտոբուսի: Կանգառում, շոգից թուլացած, մի շուն էր պառկած:

Ամեն ինչից երևում էր, որ շունը տեր չուներ: Հովիկը ուշադիր շանն էր նայում. տեսնես ո՞ւմ շունն է, ինչո՞ւ է հեռացել իր տնից՝ վռնդե՞լ են, թե՞ նեղացրել... Շունը զգաց Հովիկի հայացքը, և ինքն էլ սկսեց նայել Հովիկին:

– Ինչո՞ւ են տխուր, – հարցրին Հովիկի աչքերը...

– Մենակ են, տուն չունեն, ոտքիս էլ քարով խփել են, ցավում է, – պատասխանեցին շան աչքերը...

– Կուզե՞ս իմ շունը լինել, – հայացքով հարցրեց Հովիկը:

Շունը կարծես աշխուժացավ. վեր կացավ պառկած տեղից և մոտեցավ Հովիկին: Նա իրոք կաղում էր: Շան աչքերում ինչ-որ հույս էր արթնացել:

– Մա՛մ, տանե՞նք մեր տուն, – ասաց Հովիկը՝ հայացքով ցույց տալով շանը:

– Ի՛նչ են ասում, Հովի՛կ ջան, – ցածրաձայն ասաց մայրը:

Տեսնելով, որ շունը չի հեռանում, մայրը բռնեց Հովիկի ձեռքից և հեռացավ կանգառից: Շունը գնում էր նրանց հետևից: Հովիկը հետ էր նայում. «Գալի՞ս են», – հարցնում էր նրա արդեն անվստահ հայացքը: «Գալիս են», – ասում էին շան աչքերը. նրանց մեջ դեռ հույս կար: Մայրը, տեսնելով, որ շունը գալիս է իրենց հետևից, զայրացած շրջվեց դեպի շունը.

– Կորի՛ր...

Հովիկը ամոթահար<sup>1</sup> ու վշտացած կախել էր հայացքը: Շունը կանգ առավ, հետո կաղալով վերադարձավ կանգառ ու պառկեց իր տեղը:

– Մամ, մեղք էր շունը. ո՛չ տեր ուներ, ո՛չ տուն. ինչո՞ւ չհամաձայնվեցիր, որ տանենք մեր տուն:

– Հովիկ ջան, գուցե տերը մոտերքում է,– որդուն չվշտացնելու համար ասաց մայրը:

– Ո՛չ, մայրիկ, նա ասաց, որ անտեր է,– տխուր ու խռոված պատասխանեց Հովիկը:

– Շունը քեզ հետ խոսե՞ց,– կատակի տվեց մայրը:

– *Շունը ասքերով էր խոսում*,– ցածրաձայն ասաց Հովիկը և մինչև տուն հասնելը այլևս ոչ մի բառ չարտասանեց: Այնպե՛ս էր ավտոսում, որ մեծ չէ և չի կարող վարվել այնպես, ինչպես ինքն է ուզում: Հետո իրեն հանգստացրեց



այն մտքով, որ մեկ ուրիշը նրան անպայման տուն կտանի. մի՞թե այդքան խելացի շանը փողոցում կթողնեն...



**Վամոթահար** – ամոթից հուզված՝ շփոթված

*աշխույժ  
աշխուժանալ*



### Հարցեր և առաջադրանքներ

1. *Հովիկը ինչպիսի՞ տղա էր, որ նկատեց շանը:*
2. *Նա ինչո՞ւ ուզեց շանը տուն տանել. ի՞նչը ազդեց Հովիկի վրա:*
3. *Հովիկն ինչո՞ւ էր ամոթահար ու վշտացած կախել գլուխը:*
4. *Իսկ դո՞ւ ինչպես կվարվեիր:*



*Տանը կարդա՛ «Անձնագրիություն» հուզիչ պատմվածքը:*



### Հանելուկ

Նավասարհին է  
Միշտ իր տիրոջը,  
Երբ նրան տեսնի,  
Շարժում է պոչը:



**ա)** Տրված ո՞ր բառերն են բնութագրում Հովիկին. այդ բառերը միացրո՛ւ նկարին.

**բ)** Կարդա՛ իրար հակառակ իմաստ ունեցող զույգերը.

անուշադիր  
չար  
դաժան  
սրտացավ  
գթասիրտ



բարի  
ուշադիր  
անտարբեր  
անգութ  
հոգատար

Կարդա՛ տրված բառերը և որոշի՛ր՝ որո՞նք են կազմված միայն արմատից.

գետ, տանձենի, ձոր, գետակ, տանձ, անգույն, ձորակ, հերոս, գույն, բժիշկ, քաջություն, հերոսական, քաջ, բժշկուհի:



### Գիտե՞ս, որ...

Միայն արմատից կազմված բառը կոչվում է **պարզ բառ**:

Պարզ և ածանցավոր բառերն արտագրի՛ր դեմ դիմաց՝ օրինակի պես.

*համեղ, փոքրիկ, հայերեն, կեռասենի, համ, փոքր, աշակերտուհի, կեռաս, անվախ, աշակերտ, արջուկ, մարդ, վախ, մարդուկ, հայ, արջ:*

Օրինակ՝

պարզ

ածանցավոր

*հայ*

*հայերեն*

Անահիպ Պարսամյան

### Մարտի 8-ին



Այդ օրը դպրոցից տուն վերադառնալիս Անուշիկը գրպանում շոշափում էր թղթե ծրարը, որի մեջ մայրիկի նվերն էր.



ինքն էր պատրաստել իր ուսուցչուհու օգնությանը: Ծերմակ սովորաթղթի վրա վարդագույն փայլաթղթով փակցված էր «8» թիվը. ներքևում կարմիր մատիտով գրված էր՝ «Միրելի մայրիկին՝ Անուշիկից»: Շուրջը նկարված էին ծաղիկներ ու ժպտացող մի աղջիկ:

Տանն ամեն ինչ տոնական էր: Սեղանին վարդեր կային: Անուշիկը իր նվերը հանձնեց մայրիկին: Մայրիկն ու հայրիկը կարդացին բացիկը, շատ ուրախացան և ջերմորեն համբուրեցին իրենց ուշադիր բալիկին:

Հաջորդ օրը Անուշիկը սովորականից շուտ արթնացավ. մայրիկը մի ծաղկեփունջ էր պատրաստել իր ուսուցչուհու համար:

Երբ առավոտյան նա դպրոց մտավ, հանդիպեց Վարդուշ մայրիկին՝ դպրոցի հավաքարարին: Անուշիկը մի պահ շփոթվեց, ուզեց հարցնել, թե որտե՞ղ է իր ուսուցչուհին՝ տիկին Ցողիկը, սակայն շիկնեց և ծաղկեփունջը մեկնեց Վարդուշ մայրիկին:

– Վարդուշ մայրիկ, շնորհավո՞ր Ձեր տոնը, – շշնջաց նա:

Վարդուշ մայրիկն անակնկալի եկավ, ժպտաց, աչքերը փայլեցին ուրախությունից: Հետո արագ մի կողմ դրեց ավելը, ձեռքերը սրբեց գոգնոցով, շտկեց մազերը, ուղղեց մեջքն ու վերցրեց ծաղիկները:

– Շնորհակալ եմ, – կամաց ասաց նա, – շատ շնորհակալ եմ, բալիկս:

Անուշիկն էլ անուշ ժպտաց: Սիրտը խփում էր արագ-արագ, այտերն այրվում էին հուզմունքից: Նա ուրախ էր, շատ ուրախ: «Ուսուցչուհուս համար էլ վաղը ծաղիկներ կբերեմ», – մտածեց նա և իր արածից գոհ՝ վազեց դասարան:





### Հարցեր և առաջադրանքներ

գ.ռ.գ.  
գ.ռ.գ.ն.յ

1. Տավանեցի՞ր Անուշիկի որոշումը. ինչո՞ւ:
2. Ի՞նչ սովորեցիր Անուշիկի վարձունքից:
3. Կարդա՛ այն տողերը, որոնցում նկարագրվում է Վարդուշ մայրիկի և Անուշիկի հուզմունքը:



Կարդացե՛ք «Չյունոտը ծաղկեփունջ» քանասարեղծությունը:



Իսկ դու կարո՞ղ ևս քո մասին ասել.

Ես ուշադիր եմ բոլորի նկարմամբ:

այո՛

ո՛չ

Ես աշխատում եմ ուրախացնել բոլորին:

Կարդա՛ և որոշի՛ր, թե քանի՞ արմատ ունեն հետևյալ բառերը.

քսանչորս – քսան + չորս

մայրաքաղաք – մայր + ա + քաղաք

ծովափ – ծով + ափ

դասասենյակ – դաս + ա + սենյակ

### Գիտե՞ս, որ...



Մեկից ավելի արմատներից կազմված բառը կոչվում է բարդ բառ:

Երբեմն արմատներն իրար են միանում ա հոդակապով:

Նկարների օգնությամբ ասա՛՛ հետևյալ բարդ բառերի արմատները և կազմի՛ր ճիշտ զույգեր.



վարդագույն  
ծիրանագույն  
մանուշակագույն  
շագանակագույն  
նարնջագույն  
մոխրագույն  
երկնագույն



Տրված բառերը միացնելով՝ կազմիր բարդ բառեր և գր-  
րի՛ր օրինակի պես.

ա) *խաղ + ընկեր, քսան + մեկ, դաս + ընկեր, կես + օր,  
ծով + եզերք, օդ + անցք.*

բ) *բարձր + հասակ, պար + հանդես, հյուր + սենյակ,  
զարդ + տուփ, վարդ + գույն, ստվար + թուղթ:*

Օրինակ՝

ա

բ

*հորդ + առատ - հորդառատ*

*դաս + ա + գիրք - դասագիրք*

## Անահիտ Պարսամյան

### Ծառատունկ

Մեր դպրոցին կից այգում  
Ծառ ենք տնկում միասին,  
Հողը փորում, փխրեցնում  
ես, Արուսը, Աղասին:

Տունկը նուրբ է ու քնքուշ,  
Բողբոջ չունի դեռ վրան.  
Մենք խնամքով և զգույշ  
Փոսի մեջ ենք դնում այն:

Արուսը հողն է լցնում,  
ես հարթում եմ վրայից,  
Իսկ Աղասին ցնցուղով  
Ջուր է բերում աղբյուրից:



Կանգնել է տունկը շիտակ,  
Մեզ է նայում ժպիտով.  
Նա հող ունի ոտքի տակ,  
Ծառ կդառնա նա շուտով:



### Հարցեր և առաջադրանքներ

1. Նկարագրի՛ր ծառայրունկը:
2. Ի՞նչ է սովորեցնում այս քանասարեկծությունը.

ա) ինչո՞ւ է կարևոր ծառ տնկելը:

բ) ինչո՞ւ է տունկը գոհ ժպտում:



Տանը կարդա՛ «Երասիրասպարտ կորիզը»  
և որոշի՛ր՝ ինչո՞ւ է կորիզը երասիրասպարտ:

հարթ  
հարթել



### Ասացվածք

Նա, ով ծառ է տնկում, իրենից բացի՝ ուրիշին էլ է սիրում:



### Հանկուծներ

Ուրբը խորունկ հողում է,  
Ձեռքը քամուց դողում է:



Ամառ ու ձմեռ  
Ուրբին միշտ հող է,  
Շոգ օրին սպվեր  
Ու գույլ բերող է:

<b>1.</b>	Բարդ բառով ի՞նչ կասես՝
	<p>հիվանդ պահողին, ատամ բուժողին, քար տաշողին, մաքրություն սիրողին, դաշնամուր նվագողին, գիրք վաճառողին, աշխատանք սիրողին, կոշիկ կարողին, հայրենիքը սիրողին, փայտ կտրողին, ձուկ որսացողին:</p> <p>Օրինակ՝ հայրենիքը սիրող – <b>հայրենասեր</b>:</p>
<b>2.</b>	Արտագրի՛ր տրված բարդ բառերը և որոշի՛ր նըրանց արմատներն օրինակի պես.
	<p>ձեռագիր, անուշահոտ, աստղածաղիկ, ծնողասեր, քրսանհինգ, ժամագործ, կանաչազարդ, ընկերասեր, շագանակագույն, քաղցրաբույր, անտառապահ, զարդասեղան, ավտոմեքենա, ծառատունկ:</p> <p>Օրինակ՝ տանտեր – տան + տեր,      ձեռագիր – ձեռ + ա + գիր:</p>

## Երկու ջրիկ, երկու քույրիկ

Երկու փոքրիկ ժիր առու  
Հանդիպեցին իրարու.  
– Բարև՛, ջրի՛կ,  
Անո՛ւշ քույրիկ,  
Այդպես զուլալ՛, գլգլալով,  
Ափերիդ զով համբույր տալով՝  
Ո՞ւր ես գնում ուրախ-զվարթ:  
– Դեպի դալար՝ արոտ ու արտ.  
Ջուր տամ ծարավ ծիլ ու ծաղկին՝  
Ջվարթանան արտն ու այգին:  
Իսկ դո՞ւ, փոքրի՛կ,  
Անո՛ւշ քույրիկ...  
– Ե՛ս էլ, ե՛ս էլ քեզ պես զվարթ՝  
Դեպի դալար արոտ ու արտ...  
– Որ այդպես է, եկ միանանք  
Ու միասին արա՛գ գնանք:  
Որ միանանք, իրար ուժ տանք,  
Է՛լ ավելի արագ կերթանք,  
Է՛լ ավելի օգուտ կտանք...  
– Ճիշտ ես ասում, անո՛ւշ քույրիկ,  
Ա՛յ թե միմյանց մենք լավ գտանք,–  
Ասին, գրկած իրարու,  
Երկու փոքրիկ ժիր առու  
Ու միասին  
Հորդ ու հաշտ  
Գլորվեցին  
Դեպի դաշտ:

<sup>1</sup>զուլալ - մաքուր, վճիտ

<sup>2</sup>դալար - կանաչ



հորդ  
հորդաբար





## Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ որոշեցին երկու սովակները. ինչո՞ւ:
2. Ի՞նչ դասեր պետք է քաղես այս բանասարեղծությունից:
3. Անգի՛ր սովորի՛ր ասացվածքները և ասա՛՛ ի՞նչ միտք է արտահայտված դրանց մեջ:
4. Բանասարեղծությունն արտասանեցե՛ք դերերով:



## Ասացվածքներ

- Որ միանանք, կուժեղանանք:
- Մեջք մեջքի որ տանք, սարեր շուռ կտանք:
- Մի ձեռքը ծախ չի տա:
- Մի ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես:

Արտագրի՛ր և ուշադրություն դարձրու հետևյալ բարդ և ածանցավոր բառերի գրությանը.

կես + օր – կեսօր

վայր + էջք – վայրէջք

եղբոր + որդի – եղբորորդի

գետ + եզր – գետեզր

ան + օգուտ – անօգուտ

ան + երես – աներես

ան + ընդունակ – անընդունակ

ան + զգույշ – անզգույշ



## Գիպե՛ս, որ...

**Պարզ բառերը պահպանում են իրենց գրությունը, երբ նրանցով բարդ կամ ածանցավոր բառեր են կազմվում:**

Օրինակ՝ օր – այսօր, ընկեր – դասընկեր, էկրան – լայնէկրան:

Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողնված տառերը, որտեղ որ պետք է (տ, ե, օ, ո, ը).

այս•ր, ան•զգույշ, քսան•րեք, ան•սպասելի, լայն•կրան,  
խաղ•նկեր, եղբոր•որդի, ան•նդունակ, ամեն•րյա, վայր•ջք,  
մոր•դբայր, ան•գնական, բարձր•րակ:



## Նանդաններ

Գեղ է դառնում,  
Ծով է դառնում,  
Քո պարկերն է  
Իր մեջ առնում:



Իր ճամփան անվերջ  
Երգով է գնում,  
Անբողջ քարվա մեջ  
Չմոտանն է քնում:

## Լիպարիպ Սարգսյան

### Լորերի ընտանիքը



Ոսկեգույն արտի մեջ թեթև հով փչեց, և հասած ցորենի հասկերը ալիքների նման տատանեցին՝ իրենց ոսկե գլխիկները:

Արտը հնձելու ժամանակն էր: Գյուղացիները արտ էին եկել՝ ցորենը հնձելու: Լորերը երամ-երամ թռչում էին արտի միջից և հրաժեշտ տալիս հնձվորներին<sup>2</sup>: Բայց ահա լորերից մեկը անհանգիստ թռչկոտում էր ու ծլվլում:

– Ի՞նչ է եղել, փոքրիկս, – ասաց հնձվորներից մեկը, – այդ ի՞նչն է վախով լցրել սրտիկդ:

Լորը թռչում էր արտի վրա, իջնում հասկերի մեջ, նորից վեր թռչում: Հնձվորը հասկացավ, որ հասկերի մեջ ինչ-որ բան կա: Մոտեցավ, զգույշ շարժեց հասկերն ու հանկարծ տեսավ լորի մի քանի ձագուկներ: Նրանք դեռ շատ փոքրիկ էին ու հագիվ էին շարժում թևիկները:

Հնձվորը որոշեց օգնել լորերի ընտանիքին: Նա չհնձեց արտի այն կտորը, որտեղ լորիկի ձագուկներն էին, և այդ հասկափունջը կոչեց «Լորերի ընտանիք»:

Մի քանի շաբաթից լորիկները մեծացան, նրանց թևիկները ուժեղացան, և մի օր էլ լորերի ընտանիքը անուշ ծլվլոցով հրաժեշտ տվեց հնձվորներին ու թռավ գնաց:



<sup>1</sup>տատանել – օրորելով շարժել

<sup>2</sup>հնձվոր – արտի բերքը հնձող՝ քաղող մարդ



### Հարցեր և առաջադրանքներ

1. Բնօրին էր անհանգստացած ծրվում մայր լորը:
2. Ննձվորը ինչպե՞ս օգնեց լորերի ընտանիքին:
3. Տորիկին մի պատմություն, որտեղ դո՛ւ էլ օգնած լինես թրուշուններին կամ կենդանիներին:




ա) Անգի՛ր սովորիր «**Մայր անձողուկը**» պրանավորը:

բ) Նկարագրի՛ր մայր անձողուկի հյուսած բույնը. նա ինչպե՞ս էր պաշտպանում իր ընտանիքը:



### Առած

Լավությունն արա, ջո՛րը գցիր:



### Հաներոն

Մի պարկ ցորեն՝ փուր,  
Էստե՛նս ծով դեղին,

Նարյուր պարկ կրամ  
Ծովս հնձողին:

### Հայտարարյալ

ցորեն  
եգիպտացորեն  
գարի

բրինձ  
հաճար  
կորեկ

Հետևյալ բառակապակցություններն ասա՛ բարդ կամ ածանցավոր բառերով և գրի՛ր.

ձյունով ծածկված, խելք չունեցող, արագ հոսող, հյութով առատ, օգուտ չտվող, թթի ծառ, հունձ անող, զգույշ չեղող, ջութակ նվագող, փոքր նավ, հոր եղբայր, զբոսնելու այգի, երեսի սրբիչ, կատակ սիրող:

Օրինակ՝ գոհ չեղող – **դժգոհ**:

## Արծիվն ու հովիվը

Ամեն օր՝ դասերից հետո, փոքրիկ Վաչիկը իրենց ուլիկները տանում էր մոտակա սար՝ արածեցնելու:

Երբ ուլիկները գլուխները կախում էին՝ խոտ ուտելու, Վաչիկը գոտու տակից հանում էր գիրքը և սկսում ընթերցել: Այդ օրը ուլիկներից մեկը՝ Չալիկը, հեռացավ հոտից՝ ժայռի հետևում խոտ ուտելու: Սակայն *անմիջապես վերադարձավ:*

– Մե՛՛ք...

Փոքրիկ հովիվը հասկացավ, որ Չալիկը վախեցել է, ուստի գնաց տեսնելու, թե ի՞նչ կար ժայռի հետևում:

Տղան այնտեղ մի արծիվ տեսավ՝ փորի վրա փռված, թևերը լայն բացած: Նրա մի թևից արյուն էր հոսում:

Փոքրիկ հովիվը անմիջապես կապեց վերքը, խոտ քաղեց, փռեց մի փոս ընկած տեղ ու արծվին պառկեցրեց խոտի վրա: Արծիվը բացեց կտուցը. ծարավ էր: Վաչիկը ջուր տվեց նրան ու *քնքորեն* շոյեց գլուխը, թևերը: Նա մեկ շաբաթ խնամեց արծվին: Արծվի վերքը բուժվեց: Եվ մի օր նա լայն բացեց թևերն ու *սավառնեց՝* դեպի երկինք:

– Ճախրո՛ւմ է՞, – ծափ տվեց Վաչիկը:

– Մե՛, մե՛, մե՛, – *ուրախացան*

ուլիկները:

Չալիկը մոտեցել էր հովվին ու քսվում էր նրա ոտքերին. նա ևս ուրախ էր:

Դրանից հետո Վաչիկը



Երբեմն մի սև կետ էր տեսնում *կապույտ* երկնքում:

– Գիտե՞ս, Չալիկ, – ժպտալով ասում էր նա,– արծիվն է. հսկում է մեզ. արծիվը սրատես<sup>3</sup> է:

Ամառ էր: Ուլիկները նորից արածում էին, իսկ Վաչիկը մուշ-մուշ քնած էր փափուկ խոտերի վրա: Հանկարծ մի աղմուկ լսվեց, կարծես գավազանով *զարկեցին* ժայռին:

Վաչիկն աղմուկից *արթնացավ* ու շուրջը նայեց. ժայռի վրա մի *սհազին* օձ տեսավ, որի գլուխը ջախջախված էր<sup>4</sup>: Հետո տեսավ արծվին, որ կտուցն էր սրբում խոտերին. նա ամեն ինչ հասկացավ...

Վաչիկը գրկել էր արծվին ու շոյում էր նրա թևերը, մեջքը...  
Իսկ Չալիկը մայում էր.


– Սե՛, մե՛...

<sup>1</sup>սավառնել – թևերը լայն բացած թռչել

<sup>2</sup>ճախրել – պտույտներ կատարելով թռչել

<sup>3</sup>սրատես – սուր տեսողություն ունեցող

<sup>4</sup>ջախջախել – ուժեղ հարվածով փշրել



### Հարցեր և առաջադրանքներ

1. Փոքրիկ հովիվը ի՞նչ բարի գործ կատարեց:
2. Արծիվը ինչպե՞ս հայրնեց իր շնորհակալությունը:
3. Դո՞ւ էլ փորձիր հորինել նման մի պատմություն:
4. Տեքստում թե՞ք գրված բառերի համար ասա՛ նրանց մոտ իմաստն ունեցող բառեր:

### Սողուններ

օձ  
մողես  
կրիա  
կոկորդիլոս



### Հանկուռի

Շապիկ ունի՝ առանց կար,  
Իսկ անունը՝ երկու տաս:



Կազմությամբ ինչպիսի՞ բառեր են պատկերված նկարներում.  
*հողակապ ունեցող և հողակապ չունեցող բառերը գրի՛ր առանձին սյունակներով.*



### Յուրի Սահակյան

## Դու ի՞նչ ես արել

Կանաչ աշխարհ է  
 Ու կարմիր արև:  
 Իմ փոքրի՛կ բալիկ,  
 Այս արևի տակ  
 Դու ի՞նչ ես արել.  
 Մի ծառ տնկե՞լ ես,  
 Մի ծիտ փրկե՞լ ես,  
 Ծաղիկ ջրե՞լ ես,  
 Մեկին օգնե՞լ ես,  
 Մի սուտ ուղղե՞լ ես...  
 Մի՛ հուսահատվիր.  
 Դեռ կհասցնես,  
 Եթե բարի սիրտ,  
 Օգնող ձեռք ունես:



բառեր  
 բառեր



### Հարցեր և առաջադրանքներ

1. Բանաստեղծը ի՞նչ խրատ է փախիս երեխաներին:  
 Կարդացե՛ք «Տենց սյուսկես...» և «Վար է» փոքրիկ պար-  
 մությունները և քննարկեցե՛ք դասարանում:



### Իսկ դու կարո՞ղ ևս քո մասին ասել.

Ես իմ կատարած գործերով արդեն պատասխա- **այո՞ր՝ ո՞չ**  
 նել եմ բանաստեղծի գրեթե բոլոր հարցերին:    
 Ես դեռ շատ լավ ու բարի գործեր եմ կատարելու:


	Հետևյալ պարզ, բարդ և ածանցավոր բառերը գրի՛ր առան- ծին սյունակներով.
	<i>ծառ, ծաղիկ, օգնական, ցրտահար, ձնհալ, ջրաղաց, անձրևա-      ջուր, սիրտ, կանաչագարդ, արև, աշխարհ, Հայաստան, Հայկու-      հի, սպիտակեղեն:</i>
	Դրանցից մեկական բառ գործածի՛ր նախադասությունների մեջ:

### Թեմայի ամփոփում

- Միշի՛ր և պարմի՛ր, թե այս խնրի որ դասը ինչ բարի գործի մասին էր:
- Դու ի՞նչ լավ գործեր ես կատարել. գրի՛ր դրանցից մեկի մասին:



# ԽՄ ԱՆՈՒՇԻՎ ՀԱՅԱՍՏԱՆ



Մայրիկն անուշ անուն է,  
Մայրենին՝ էլ ավելի:  
Հայրիկն անուշ անուն է,  
Հայրենին՝ էլ ավելի:

Անունները այս անուշ  
Մեզ հեպ ածում, քարճրանում,  
Քաղցրանում են օրեցօր  
Ավելի ու ավելի:



Միլվա Կապուրիկյան



## Մեր տան մեջ

Մի գանձ ունենք մեր տան մեջ,  
Նրանով ենք երջանիկ,  
Սեր է տալիս մեզ անշեջ<sup>1</sup>.  
Նրա անունն է՝ մայրիկ:

Մի աստղ ունենք մեր տան մեջ,  
Այն լուսատուն է մեր տան,  
Հույս ու լույս է տալիս մեզ  
Եվ անունն է՝ Հայաստան:

Մի ուժ ունենք մեր տան մեջ,  
Հաց է տալիս ու բարիք,  
Մեզ պաշտպանում է անվերջ.  
Նրա անունն է՝ հայրիկ:

<sup>1</sup>անշեջ – չմարող



երգանիկ  
երգանկություն



### Հարցեր և առաջադրանքներ

1. Բանասարեղծուհի Միլվա Կապուրիկյանը ինչերի՞ հետք է համեմատում մայրիկին ու հայրիկին. ինչո՞ւ:
2. Իսկ հայրենի՞քը ինչի հետք է համեմատվում. ինչո՞ւ:





### Նիշո՞ւմ ես, որ...

Ո՞վ կամ ի՞նչ հարցերին պատասխանող բառերը  
ցույց են տալիս **առարկա**:

Գրի՛ր բառեր, որոնք պատասխանեն <i>ո՞վ</i> և <i>ի՞նչ</i> հարցերին:		
Օրինակ՝	<i>ո՞վ</i> <i>հայրիկ</i>	<i>ի՞նչ</i> <i>արև</i>
Երկուական բառ գործածի՛ր նախադասությունների մեջ:		


### Սիլվա Կապուրիկյան



### Երգ հայրենիքի մասին

Հայրենիքից անուշ ու թանկ  
 Ուրիշ ի՞նչ կա երկնքի տակ.  
 Ջուրը՝ անուշ,  
 Հողը՝ անուշ,  
 Կարմիր արև՝  
 Շողը անուշ.  
 Արտերը՝ ծով,  
 Դաշտերը՝ զով,  
 Լեռները՝ վեր,  
 Արծիվը՝ տեր:


Հայրենիքից անուշ ու թանկ  
 Ուրիշ ի՞նչ կա երկնքի տակ.  
 Նա է տվել  
 Ինձ հայ անուն  
 Ու պարգևել



Հայոց լեզուն,  
ճերմակ Մասիս,  
Կապույտ Սևան  
Եվ վարդագույն  
Նոր Երևան:

*Ուր էլ գնամ,  
Ինչ էլ լինի,  
Ես զավակն եմ  
Նայասարանի:*

Հայրենիքից անուշ ու թանկ  
Ուրիշ ի՞նչ կա երկնքի տակ:



Երևան  
Սևան



**Հարցեր և առաջադրանքներ**

1. Բանասարեղծուհու համար ի՞նչն է ամենաթանկ բանը. ինչո՞ւ:
2. Նայրենիքը մեզ ինչե՞ր է պարզևել:
3. Ի՞նչ միտք է արդաստարված թեք գրված քառապտղի մեջ:



**Հաներոն**

Մի լիճ գիրեն՝  
Տանձի ձև,  
Աչքը՝ կապույտ,  
Բիրը՝ սև:



**Եռասանը**

Մեծ Մասիսը  
Մեծ է Փոքրից,  
Փոքր Մասիսը  
Փոքր է Մեծից:

<p>n'վ</p>	<p>ովքե՛ր</p>	<p>ինչե՛ր</p>
<p>անձ</p>	<p>ի՞նչ</p>	<p>իր</p>



### Տիշն՝ամ ես, որ...

Ո՛վ, ուվքե՛ր հարցերին պատասխանող բառերը ցույց են տալիս **անձ**:

Ի՞նչ, ինչե՛ր հարցերին պատասխանող բառերը ցույց են տալիս **իր**:

<b>1.</b>	Բանաստեղծության մեջ գտի՛ր <i>ի՞նչ, ինչե՛ր</i> հարցերին պատասխանող բառերը և գրի՛ր առանձին խմբերով:
<b>2.</b>	Գտի՛ր և առանձին խմբերով գրի՛ր <i>ո՛վ, ուվքե՛ր</i> հարցերին պատասխանող բառեր և դրանցից երեքը գործածի՛ր նախադասությունների մեջ:

### Ըստ Սրբեփան Լիսիյանի



### Ազգային տոն

*Միրելի՛ փոքրիկ, դու արդեն գիտես, որ հայերեն այբուբենն սրեղծել է Մեսրոպ Մաշտոցը:*

*Տի՛նա կարդա՛, թե հայ ժողովուրդն ինչպե՛ս դի՛մավորեց իր առաջին ուսուցչին և նշեց գրերի գյուրի մեծ տոնը:*

Մեզանից հազար վեց հարյուր տարի առաջ էր այդ: Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատը ցնծության՝ մեջ էր: Քաղաքի փողոցներն ու հրապարակները տոնական տեսք էին ստացել: Ամենուրեք փողփողացող<sup>2</sup> գույնզգույն դրոշներ էին, վարդեր ու ծաղիկներ, տոնականորեն հագնված մարդիկ: Հրապարակում բարձր ու զիլ հնչում էին բամբիռն ու ծնծղան<sup>3</sup>, ժողովուրդը երգում ու պարում էր: Մարդիկ ծաղիկներ էին նվիրում իրար, մեծ տոնի առթիվ շնորհավորում միմյանց:

Մայիսյան այդ պայծառ ու մարդաշատ առավոտ հայ ժողովուրդը առաջին անգամ նշում էր հայերեն տառերի գյուտի մեծ տոնը: Բոլորը գնում էին դեպի քաղաքի գլխավոր դարպասը: Այստեղ ժողովուրդը պիտի դիմավորեր հեռավոր եղեւսիա քաղաքից վերադարձող հայ մեծ գիտնական Մեսրոպ Մաշտոցին. նա բերում էր իր ստեղծած հայերեն տառերը:

Ժողովուրդը Մեսրոպ Մաշտոցին դիմավորեց քաղաքից դուրս՝ գլխավոր դարպասից բավական հեռու: Այդտեղից մինչև քաղաք երիտասարդները Մեսրոպ Մաշտոցին ձեռքերի վրա բերեցին: Քաղաքից և շրջակա գյուղերից եկած հազարավոր մարդիկ ծափահարում և ողջունում էին նրան: Բոլորն էլ ուրախ ու հպարտ էին, որ արդեն ունեն իրենց սեփական գրերը և կարող են իրենց ազգային դպրոցներում հայերեն գրել-կարդալ սովորել և հայերեն աղոթել:

Ազգային մեծ տոն էր...



Մարդ  
Ժողովուրդ

<sup>1</sup>ցնծություն – մեծ ուրախություն

<sup>2</sup>փողփողալ – ծածանվել՝ ալիքածն շարժվել

<sup>3</sup>բամբիռ, ծնծղա – հին հայկական երաժշտական գործիքներ



## Հարցեր և առաջադրանքներ

1. Նայ ժողովուրդը ինչպե՞ս դիմավորեց Մեսրոպ Մաշտոցին. ինչո՞ւ:
2. Ի՞նչ նշանակություն ունեցավ գրերի գյույրը հայ ժողովրդի համար:
3. Ինչո՞ւ է դասը վերնագրված «Ազգային փոն»:

## Տարիների խրատներից



Փոքրիկս, արժանի՛ եղիր Մեսրոպ Մաշտոցի թոռնիկը կոչվելու:

Լավ սովորիր և մաքուր ու անաղա՛րտ պահիր մեսրոպարատ հայոց լեզուն:

Որոշի՛ր, թե ի՞նչ են ցույց տալիս հետևյալ բառերը՝ *ա՛նձ*, *թե՞ իր*, և արտագրի՛ր երկու սյունակով.

*մայր, մայրաքաղաք, աղջիկ, փողոց, ձեռք, երիտասարդներ, տղա, դրոշներ, վարդեր, երեխա, գիտնական, դարպաս, ղրպրոց, առավոտ, մարդիկ, գյուղացիներ, հորեղբայր, ուսուցիչ, երգ, տառ:*

## Մանուկ Դավիթը



### I

Սիրելի՛ փոքրիկ, դու անշուշտ տեսել ես Սասունցի Դավթի արձանը Երևանի երկաթուղային կայարանի հրապարակում, որն էլ դրա համար կոչվում է Սասունցի Դավթի հրապարակ:

Դավիթը նստած է իր հրեղեն ձիւն՝ Քուռկիկ Ջալալին, և կայծակի պես կտրող թուրը ձեռքին՝ կարծես պատրաստ է թըշնամիներից պաշտպանելու մեր հայրենի երկիրը:

Մանկությունից քաջ էր Դավիթն ու համարձակ: Իր ծը-  
նընդյան առաջին իսկ օրը նա գրկվել էր ծնողներից: Եվ որք  
Դավթին պահել-մեծացրել է իր հորեղբայր Ձենով Օհանը: Նա  
*Ձենով Օհան* է կոչվել, քանի որ շատ բարձր ծայն ուներ:

Պատմում են, որ Մանուկ Դավիթը ոչ թե տարով, այլ օրով  
էր մեծանում: Նա մանկուց սիրում էր ազատությունը և չէր  
ուզում, որ իրեն բարուրեն. կտրտում էր բարուրի կապերը. դրա  
համար էլ բարուրը շղթայով էին կապում:

Դավիթը բարի էր ու ազնիվ: Խաղի մեջ խարդախություն  
չէր սիրում և ծեծում էր նրանց, ովքեր փորձում էին խաբել ի-  
րեն:

Երբ Դավիթն ութ տարեկան եղավ, հորեղբայրը նրա հա-  
մար գնեց երկաթե ոտնաման, երկաթե մահակ<sup>1</sup> ու դարձրեց  
գառնարած:

*Քշեց նախիրը մեր հովիվ հսկան,  
Ելավ Սասունի սարերն աննման:*


*- Է՛յ, ջա՛ն սարեր,  
Սասնա՛ սարեր,  
Ի՛նչ անուշ է  
Ձեր լանջն ի վեր...,-*

*Որ կանչեց, նրա ձայնից ահավոր  
Դողող-դըմդըմբոցն ընկավ սար ու ձոր:*

*Վայրի գազաններ բներից փախան,  
Քարեքար ընկան, դատարկուն եղան<sup>2</sup>:*

*Դավիթը ընկավ նրանց հետևից,  
Որին՝ մի սարից, որին՝ մի ձորից՝  
Աղվես, նապաստակ, գայլ, եղնիկ բռնեց,  
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց  
Ու դեպի Սասնա քաղաքը քշեց...*

Հովհ. Թումանյան



2

Ավանդությունը պատմում է, թե Դավիթը մի օր ոչխարի հոտը Սև սարից Մշո դաշտ իջեցրեց:

Կեսօր էր: Կանայք կթուն էին ոչխարները, երեխաները վազվրզում էին նրանց շուրջը:

Չանկարծ դիմացի լեռան լանջից մի հսկա ժայռ է պոկվում և մեծ թափով գլորվում ցած: Դավիթը տեսնում է, որ գլորվող ժայռը տակն էր գցելու ստորոտում հավաքված կանանց, երեխաներին և ոչխարներին: Նա մի ոստյունով<sup>3</sup> իսկույն հասնում է ժայռին և աջ ձեռքով կանգնեցնում հսկայական ուժով գահավիժող<sup>4</sup> ժայռը:

Վիթխարի<sup>5</sup> ժայռը տեղնուտեղը կանգ է առնում, իսկ Դավթի աջ ձեռքի դրոշմը<sup>6</sup> մնում է նրա վրա:

Ասում են, թե այդ ժայռը մինչև այսօր էլ կանգնած է Մշո դաշտում՝ Սև սարի ստորոտում: Սասունցի Դավթի մեծ քաջագործության ու բարի գործի համար ժողովուրդը այդ ժայռը կոչել է **Դավթի քար**:



<sup>1</sup>մահակ– փայտե հաստ գավազան  
<sup>2</sup>դատարկուն լինել– տնից-տեղից գրկվել, թափառական լինել  
<sup>3</sup>ոստյուն– ցատկ  
<sup>4</sup>գահավիժել– ուժեղ թափով ցած գլորվել  
<sup>5</sup>վիթխարի– հսկա  
<sup>6</sup>դրոշմ– հետք

տեղաբար  
հորտեղաբար  
Մշո դաշտ  
Սև սար





## Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ է Սասունցի Դավիթը, ինչպիսի՞ մանկություն է ունեցել նա:
2. Ինչպիսի՞ն էր մանուկ Դավիթը. կարդա՛ այդ տողերը:
3. Որտե՞ղ է գրելվում Սասունցի Դավթի արձանը. նկարագրի՛ր այն:
4. Անգի՛ր սովորի՛ր հովիվ Դավթին բնութագրող ուրանավորը:
5. Պարունի՛ր Դավթի քաջագործության մասին:

### հասարակ անուն

տղա  
աղջիկ  
երկիր  
քաղաք  
գյուղ  
սար  
գետ  
լիճ  
ծով  
օվկիանոս



### հայրուկ անուն

Դավիթ Գևորգյան  
Գոհար Գասպարյան  
Հայաստան  
Երևան  
Զովք  
Արարատ  
Արաքս  
Սևանա լիճ  
Սև ծով  
Խաղաղ օվկիանոս



### Նիշո՞ւմ ես, որ...

**Նասարակ անունները** գրվում են փոքրատառով,  
**իսկ հայրուկ անունները՝** մեծատառով:

**1.**

Տեքստից դո՛ւրս գրի՛ր հատուկ անունները և բացատրի՛ր, թե դրանք ինչերի՞ անուններ են:

Այդ բառերից չորսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

2.

Անձ և իր ցույց տվող հատուկ անունները գրի՛ր առանձին սյունակներով.

Հայաստան, Վաղարշապատ, Միեր, Մասիս, Սիս, Մեսրոպ Մաշտոց, Եղեսիա, Երևան, Սևան, Չալո, Պույպույ մկնիկ, Բեմբի, Հովհաննես Թումանյան, Բեթղեհեմ, Սուրբ Ծնունդ, Ֆրիդերիկ Ծոպեն, Անդերսեն:

Օրինակ՝	անձ	իր
	Միեր	Եղեսիա

### Երվանդ Պեպրոսյան

### Փոքրիկ թռուկիկս

Քաջ Միեր ես,  
Փոքրիկ Միեր՝  
Առյուծասիրտ<sup>1</sup>  
Ու անվեհեր<sup>2</sup>:

Եվ բարի ես  
Դու անսահման՝  
Քո Մեծ Միեր  
Պապի նման:

Բայց երբ մեկը  
Հարվածի մեզ,  
Գիտեմ՝ իսկույն  
Ոտքի կելնես,

Կդառնաս ուժ,  
Կդառնաս դև<sup>3</sup>  
Ինչպես Միերն  
Առյուծաձև<sup>4</sup>:



առյուծ  
առյուծասիրտ  
առյուծաջև

<sup>1</sup>առյուծասիրտ – այստեղ՝ շատ քաջ  
<sup>2</sup>անվեհեր – անվախ  
<sup>3</sup>դև – այստեղ՝ ամենակարող արարած  
<sup>4</sup>առյուծաձև – առյուծ ձևող՝ առյուծին կտոր-կտոր անող



### Հարցեր և առաջադրանքներ

1. Պատկեր ո՞ւմ հետ է համեմատում թոռնիկին. լսե՛լ ես Առյուծաձև Մեղի մասին:



Անգի՛ր սովորիր «Քաջ Մեղին եմ» ուրանավորը. արդասանի՛ր այնպես, որ պատկեր վարսահ լինի, թե կարդարացնես իր հույսերը:



### Պատիճի խրատներից

Թոռնիկս, քա՛ջ ու անվեհեր եղիր:

Դո՛ւ էլ պարրասար եղիր մեժ ու լավ գործեր կարարելու հայրենիքիդ համար:

Կազմիր ճիշտ բառակապակցություններ.

ինչպիսի՞

գույնգգույն

սև

համեղ

հոտավետ



### Նիշո՞ւմ ես, որ...

Ինչպիսի՞ հարցին պատասխանող բառերը ցույց են տալիս **առարկայի հարկանիշ**:



Բանաստեղծության մեջ գտի՛ր **առարկայի հարկանիշ** ցույց տվող բառերը և դրանցով կազմիր բառակապակցություններ:

Գոհի՛ր բառակապակցությունները. *հատկանիշ* և *առարկա* ցույց տվող բառերը գրի՛ր առանձին.

*Մայրենի լեզու*  
(հարված)

*Ամռանն աղբյուր է,  
Ձմռանը հուր է,  
Մոր տաք համբույր է  
Մայրենի լեզուն:  
Քաղցրօրոր երգ է,  
Մայրական ձեռք է*

*Ու հզոր զենք է  
Մայրենի լեզուն:  
Վեհ Արարատն է,  
Կապույտ Սևանն է,  
Նոր Երևանն է  
Մայրենի լեզուն:*

Ս. Մուրադյան

Օրինակ՝	<i>հատկանիշ</i>	<i>առարկա</i>
	<i>քաղցրօրոր</i>	<i>երգ</i>

Ըստ Արամ Ղանալանյանի

## **Այծեմնիկը**



Շատ ու շատ տարիներ առաջ թաթարների հսկայական բանակը հարձակվեց Հայաստանի վրա: Թշնամին պաշարեց<sup>1</sup> Հայաստանի մայրաքաղաք Անին: Հայերը թվով քիչ էին, սակայն հերոսաբար պաշտպանում էին իրենց հայրենի քաղաքը: Ամբողջ մի տարի քաղաքը պաշարված մնաց, սակայն թըշնամին չկարողացավ մտնել Անի:

Կռիվը գնալով սաստկանում էր: Թշնամու զորքերն արդեն մոտեցել էին քաղաքի պարիսպներին:

Ու մի օր էլ, երբ հայերի վիճակը ծանրացավ, քաղաքի միջնաբերդի<sup>2</sup> պարիսպների վրա երևաց Այծեմնիկ անունով մի խիզախ<sup>3</sup> աղջիկ: Նա իր շուրջն էր հավաքել իր նման քաջ աղջիկների ու եկել էր՝ տղամարդկանց օգնելու: Այծեմնիկը, կանանց գնդի գլուխն անցած, քարերով ու նետերով հարվածում էր թըշնամուն:

Նետերը տեղում էին կարկուտի պես և խոցում<sup>4</sup> աղջիկներին, սակայն նրանք չէին թողնում կռվի դաշտը: Այծեննիկը, արհամարհելով ցավ ու մահ, մարմնից հանում էր նետերը և դրանցով խոցում թաթարներին: Ընկերուհիները հետևում էին իրենց քաջ հրամանատարի օրինակին:

Այծեննիկի հերոսական արարքը զարմացրել էր նույնիսկ թաթարներին: Նա խիզախորեն կռվում էր և պաշտպանում իր հայրենիքը: Նրա ղեկավարած կանանց գունդը մեծ վնաս էր հասցնում թշնամուն: Դրա համար էլ հենց որ պարիսպների վրա երևում էր կանանց գունդը, թաթարներն ուժեղացնում էին հարձակումը: Սակայն աղջիկները կռվում էին հերոսաբար և երբեք չէին վախենում կատաղած թշնամուց:

Դարեր<sup>5</sup> են անցել, բայց հայրենիքը չի մոռացել իր հերոս դուստրերի քաջագործությունը:




<sup>1</sup>Աաշարել– շրջապատել՝ գրավելու համար

<sup>2</sup>միջնաբերդ– հնում քաղաքների կենտրոնում գտնվող պարսպապատ բարձր շինություն

<sup>3</sup>խիզախ– համարձակ, անվախ, քաջ


<sup>4</sup>խոցել– զենքով կամ սուր գործիքով վիրավորել

<sup>5</sup>դար– հարյուր տարի





### Հարցեր և առաջադրանքներ

1. Տայերը ինչո՞ւ էին պաշտպանելու ելել իրենց հայրենիքը:
2. Ինչպիսի՞ աղջիկ էր Այծեմհիկը:
3. Պարմի՞ր՝ հայուհիները ինչպե՞ս էին կռվում ու պաշտպանում մեր հայրենիքը:
4. Նրանք ինչի՞ օրինակ պեղք է ծառայեն քեզ համար:  
 Բասարանում կարդացե՞ք «Իմաստուն գինվորը» առակը. այն ի՞նչ է սովորեցնում ձեզ:

Ի՞նչ անել-  
ի՞նչ է անում...

Արամը նկարում է:



Հասմիկը պարում է:



Անին նվագում է:

Ի՞նչ լինել-  
ի՞նչ է լինում...

Ձյունը հալչում է:



Փայտը վառվում է:

Ջուրը եռում է:



### Նիշո՞ւմ ես, որ...

Ի՞նչ անել, ի՞նչ լինել, ի՞նչ է անում, ի՞նչ է լինում... հարցերին պատասխանող բառերը ցույց են տալիս առարկայի կապարում **գործողությունը**:



1.

Փորձիր ասել՝ ի՞նչ հարցերի են պատասխանում այս բառերը և գրիր դրանք երկու սյունակով.

*ուտել, մրսել, խմել, կարմրել, հիվանդանալ, կարդալ, գրսնել, մեծանալ, երգել, երկարել, գրել, բացվել:*


Օրինակ՝ 

	ի՞նչ անել	ի՞նչ լինել
	նստել	կարճանալ

Յուրաքանչյուր խմբից երկուական բառ գործածիր նախադասությունների մեջ:

2.

Տեքստի մեջ գտիր առարկայի *գործողությունը* ցույց տրվող տասը բառ. որոշիր՝ ի՞նչ հարցերի են դրանք պատասխանում:



### Քաջ Վարդանը



Դարեր շարունակ օտարները փորձել են գրավել մեր երկիրը, ոչնչացնել հայերին:

Այդպես պատահեց նաև հինգերորդ դարում, երբ պարսից թագավոր Չազկերտը հրամայեց, որ հայերը փոխեն իրենց կրոնը, մոռանան իրենց լեզուն և պարսկերեն խոսեն: Հայ ժողովուրդը մերժեց Չազկերտի հրամանը: Պարսից թագավորը զայրացած որոշեց քանդել, ավերել Հայոց երկիրը և պատժել անհնազանդ հայերին:

Հայերը սկսեցին կռվի պատրաստվել: Հրամանատար ընտրեցին քաջ ու համարձակ Վարդան Մամիկոնյանին, որի համար հայրենիքն ու հայ ժողովուրդը սրբություն էին:

Ճակատամարտը տեղի ունեցավ Ավարայրի դաշտում՝ Տըղմուտ գետի ափին, 451 թվականի մայիսի 26-ին:

Անհավասար կռիվ էր. հայ զինվորները շատ ավելի քիչ էին

պարսից զորքից: Պարսիկները նաև փղեր էին հանել հայերի դեմ: Բայց հայ զինվորները կռվում էին քաջաբար, քանի որ պաշտպանում էին իրենց հայրենիքը, հավատը և լեզուն: Տըղամարդկանց հավասար կռվում էին նաև հայ կանայք. նրանք պատրաստ էին զոհվելու մարտի դաշտում, քան թե գերի ընկնել թշնամու ձեռքը:

Չերոսական կռվի պահին զոհվեցին Վարդան Մամիկոնյանը և շատ հայ նախարարներ<sup>1</sup>: Սակայն պարսիկները այլևս չպահանջեցին, որ հայերը փոխեն իրենց կրոնը և մոռանան իրենց լեզուն: Եվ հայր մնաց *հայ*, երկիրը՝ *Հայաստան*:

Անցել են դարեր, սակայն հայ ժողովուրդը միշտ վառ է պահում Ավարայրի ճակատամարտում զոհվածների սուրբ հիշատակը: Եվ փետրվարի առաջին կեսին տոնում է *Սուրբ Վարդանանց* տոնը:



<sup>1</sup>Նախարար – իշխան հին Հայաստանում

սուրբ  
արքունիքուն  
արբավայր



**Հարցեր և առաջադրանքներ**

1. Ինչո՞ւ փեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը:
2. Ի՞նչ դասեր պետք է քաղես այս պատմությունից:





### Գիտե՛ս, թե՞ չգիտես ...

Իջևանի շրջանում մի հսկա կաղնի է եղել: Այն փնկել է Վարդան Մամիկոնյանը՝ կովից վերադառնալիս. դրա համար էլ կոչվել է Զորավարի կաղնի:

Կաղնու ամեն մի ճյուղը ծառի չափ էր. նրա բնի փորվածքում ինը - տասը մարդ կարող էր տեղավորվել:

<b>1.</b>	<p>Առարկա և գործողություն ցույց տվող հետևյալ բառերից կազմիր ճիշտ զույգեր և գրիր օրինակի պես.</p>
	<p><i>գիր, մեխել, թերթ, կռվել, թերթել, սղոց, ներկել, գրել, մեխ, տոն, ներկ, սղոցել, տոնել, կռիվ, ծանկ, ծանկել:</i></p> <p>Օրինակ՝ գիր - գրել:</p> <p>Առարկայի գործողություն ցույց տվող երեք բառ գործածիր նախադասությունների մեջ:</p>
<b>2.</b>	<p>Գործողություն ցույց տվող հետևյալ բառերը խմբավորիր ըստ տրված հարցերի.</p>
	<p><i>գրավել, մոռանան, հրամայեց, քանդել, խոսեն, կռվում էին, պաշտպանում էին, տոնում է, պահում է, մերժեց, որոշեց, փոխեն, ոչնչացնել, պատժել:</i></p> <p>Օրինակ՝ <i>ի՞նչ անել - ոչնչացնել, ...</i>  <i>ի՞նչ է անում - ...</i>  <i>ի՞նչ արեց - ...</i>  <i>ի՞նչ էին անում - ...</i>  <i>ի՞նչ անեն - ...</i></p>

### Սուրեն Մուրադյան

### Խաղաղության դասը

Հասկավորված դեղին ցորեն,  
Հովն է խաղում արտերում.



Փոքրիկները դեղին գույնով  
 Խաղաղություն են նկարում:  
 Մի կապուտակ, մաքուր երկինք,  
 Ուր փուչիկներն են պարում.  
 Փոքրիկները կապույտ գույնով  
 Խաղաղություն են նկարում:  
 Կանաչ անտառ, կանաչ հանդեր<sup>1</sup>,  
 Հոտը փռված է սարում.  
 Փոքրիկները կանաչ գույնով  
 Խաղաղություն են նկարում:  
 Աղավնիներ ճերմակաթև  
 Թևածում<sup>2</sup> են ամպերում.  
 Փոքրիկները ճերմակ գույնով  
 Խաղաղություն են նկարում:  
 Խաղաղության դասն սկսվեց.  
 Մանուկները տետրերում  
 Ծիածանի պերճ<sup>3</sup> գույներով  
 Խաղաղություն են նկարում:



<sup>1</sup>հանդ – դաշտ  
<sup>2</sup>թևածել – սավառնել  
<sup>3</sup>պերճ – շքեղ՝ ճոխ

թև  
 թևածել  
 ճերմակաթև



**Հարցեր և առաջադրանքներ**

1. Փոքրիկները ինչե՞ր նկարեցին խաղաղության դասին. ինչո՞ւ:
2. Երեխաները յուրաքանչյուր նկար ի՞նչ գույնով նկարեցին. ինչո՞ւ:
3. Նկարներից ո՞րն է խաղաղության խորհրդանիշը և ի՞նչ է կոչվում:



## Հանելուկ

Ո՞ր թռչունն է մեզ հին ընկեր,  
Նամակատար, նամակաբեր:  
Նա նշանն է խաղաղության,  
Բարեկամն է ողջ մարդկության:



## Ճանաչի՛ր և ճի՛շտ միացրու.

Խաղաղությունն ու ազատությունը

չարիք է:

Նայրենիքիդ համար

հարստություն են:

Միությունը

մի՛ խնայիր

Պարերազմը

ո՛չ ուժդ, ո՛չ կյանքդ:

ուժ է:

1.

Հարցերով որոշի՛ր, թե հետևյալ բառախմբերի բառերից ամեն մեկը ի՞նչ է ցույց տալիս, և գրի՛ր համապատասխան սյունակում.

դեղին-դեղնել-դեղնություն, փոքր-փոքրանալ-փոքրություն,  
մաքուր-մաքրել-մաքրություն, գույն-գունավոր-գունավորել,  
կանաչ-կանաչել-կանաչություն, խաղաղ-խաղաղություն-  
խաղաղվել, նկար-նկարել, կապույտ-կապտել:

Օրինակ՝	առարկա	հասկանիչ	գործողություն
	դեղնություն	դեղին	դեղնել

2.

Միացրու առարկան և նրա գործողությունը ցույց տվող բառերը՝ օրինակի պես.

- առվակ, քամի, վարդ, սոխակ, արև, տերևներ, երեխաներ.
- վազվզում են, կարկաչում է, սոսափում են, շողշողում է, դայլայլում է, բացվում է, սուլում է:

Օրինակ՝ երեխաները վազվզում են:

\* Սուրեն Սուրադյան

## Անմահ գանձերը

Մի անգամ ես հայրիկիս հետ  
Մատենադարան բարձրացա  
Եվ Մաշտոցի արձանի մոտ  
Այնքան շա՛տ-շա՛տ բան իմացա:  
Սեգ<sup>1</sup> բարձունքին սուրբ Մաշտոցը,  
Այբուբենը բռնած ձեռքին,  
Գուրգուրանքով, հավատով լի  
Դաս էր տալիս մի մանկիկի:  
Փոքրիկ տղան հպարտ-հպարտ  
Շեշտում էր **Ա**-ն, հեգում հատ-հատ՝  
**Ա-րև, Ա-րաքս** և **Ա-րա-րատ**:  
Երբ **արև** էր արտասանում,  
Յայոց աշխարհն էր ջերմանում:  
Երբ **Արաքս** էր շուրթին շողում,  
Յայոց լեզուն էր գեղգեղում<sup>2</sup>:  
Երբ **Արարատ** բառն էր զնգում,  
Դարերն էին արձագանքում:  
Վեց տարեկան երևանցին,  
Յայոց արևը ջինջ հոգում,  
Մեր իմաստուն մեծ Մաշտոցի  
Անմահ գանձերն էր ժառանգում:



<sup>1</sup> սեգ - հպարտ

<sup>2</sup> գեղգեղել - դայլայլել՝ երգել



### Հարցեր և առաջադրանքներ

1. Մեսրոպ Մաշտոցը որտե՞ղ է դաս տալիս հայ մանկիկին. ինչո՞ւ:
2. Ի՞նչ էր տեղի ունենում, երբ փոքրիկ տղան արտասանում էր **արև**, **Արաքս** և **Արարատ** բառերը:
3. Վեց տարեկան մանուկը ի՞նչ էր ժառանգում մեծ Մաշտոցից. ինչե՞րն են այդ անմահ գանձերը:

## Հայաստան ասելիս պատկերացնում ենք.

### Խաչքար

Շատ հին ժամանակներից սկսած այս գեղեցիկ հուշարձանները հայերն են միայն կանգնեցնում: Հայաստանում խաչքարերն անթիվ են ու անհամար, և դրանց՝ ժանյակի նմանվող զարդաքանդակները երբեք չեն կրկնվում:



### Խաղող և նուռ

Ասում են՝ Հայաստանում աճող այս քաղցրահամ պտուղները դեռևս հին ժամանակներից համարվել են կյանքի ու առաքության խորհրդրդանիշ. սհա թե ինչո՞ւ դրանք հաճախ կարելի է րեանել հայկական զարդաքանդակների մեջ:



### Ծիրան

Հայաստանը ծիրանի հայրենիքն է: Այս արևահամ և արևաբույր պտուղը Հայաստանում սպրում է դեռևս Հայկ նահապետի ժամանակներից: Ծիրանը մեզ համար ամենանրբահամ պտուղն է, իսկ ծաղկած ծիրանենին՝ ամենագեղեցիկ ծառը:

Ոսկեգույն ծիրանը Հայաստանի խորհրդանիշն է:



### Արագիլ ու բարդի

Հայաստանը խորհրդանշող մի շատ գեղեցիկ բնապատկեր կա. դեպի երկինք ձգվող բարդու վրա՝ իր բնի մեջ, մի ուրթի վրա խաղաղ կանգնած էճերմակ արագիլը:

Նեովում երևում են Մեծ ու Փոքր Մասիսները...




Իսկ դու՞ ինչ ես պատկերացնում Հայաստան ասելիս:

## Թեմայի ամփոփում



Դաս-ցերեկույթ՝ «Իմ Երևանը»:

# ԳԱՐՈՒՆ Է, ՄԻՐՈՒՆ Է



Ես գարունն փեսա  
Ամեն բույսի մեջ,  
Կանաչ լույսի մեջ,  
Արշալույսի մեջ:  
Ես գարունն փեսա  
Ծաղկանց աչքի մեջ,  
Թռչնի կանչի մեջ,  
Ծով կարկաչի մեջ:  
Ես գարունն փեսա  
Շանթ ու շողի մեջ,  
Հուլունք ցողի մեջ,  
Տաքուկ հողի մեջ:



Ձմռան վերջն էր: Մի օր արևը բարձրացավ վեր ու ավելի ցերմ շողաց: Արևի ժպիտից էլ ծնվեց գարունը:

– Ծառե՛ր, ծաղիկնե՛ր, խոտե՛ր ու բույսե՛ր, բավ է ինչքան քնեցիք,– ասաց գարունը,– արթնացե՛ք: Ես արդեն եկել եմ. արթնացե՛ք ու երկիրը զարդարե՛ք կանաչով:

– Բարև՛ քեզ, բարև՛, սիրելի՛ գարուն,– ասացին խոտերն ու կանաչեցին:

– Բարև՛, բարև՛,– ասացին ծաղիկներն ու ծառերը և սկսեցին աճել ու ծաղկել:

– Օ՛, այս ի՛նչ լավ է, որ եկար, սիրելի՛ գարուն, մենք թմրած էինք,– ասացին մեղուները և տզտզալով դուրս եկան իրենց փեթակներից:

Դրսում տաք էր: Թռչունները երգում էին: Մարդիկ աշխատում էին դաշտերում ու այգիներում: Ամենուրեք ծաղիկ էր ու կանաչ:

Մեղուները թռան մոտակա խնձորենու մոտ և խնդրեցին.

– Խնձորենի՛, ծաղիկներիդ բա՛ց, որ քո հյութը քաղենք. մենք կարոտել ենք ծաղիկներին:

– Ափսո՛ս, շա՛տ ափսոս, որ իմ ծաղկելու ժամանակը չէ. գնացե՛ք բալենու մոտ:

Մեղուները թռան դեպի բալենին:

– Բարո՛վ եկաք, ժի՛ր մեղուններ, սիրունիկնե՛ր,– ասաց բալենին,– բայց իմ ծաղիկները դեռ քնած են, վա՛ղը եկեք:

Մյուս կողմից մեղուներին կանչեց նշենին, որն իր վարդագույն ծաղիկներն արդեն բացել էր և լցրել քաղցր հյութով:

Մեղուները ուրախ-ուրախ թռան դեպի նշենին:



հյութ  
հյութալի



## Հարցեր և առաջադրանքներ

1. Պատրմիր՝ ինչպե՞ս եկավ գարունը:
2. Ո՞ր ծառերն են ամենից շուրջ ծաղկում:

ա) Ծաղկած ո՞ր ծառն էս ամենից շատ սիրում. նկարի՞ր այն:

բ) Տանը կարդա՛ «Ծաղիկների գույներ» հեքիաթը:



## Հանելուկներ

Ամպիկի միտքը  
Զգում է իսկույն,  
Ծաղիկը թողած՝  
Շրտապում է րուն:



Կանաչ մի ծով է,  
Կանաչ մի ծով է,  
Մանուշակ աչքով  
Այդ մանկիկն ո՞վ

## Ի՞նչ են խորհրդանշում.

վահկություն  
ագահություն  
աշխատասիրություն  
խաղաղություն  
խորամանկություն  
հավատարմություն



Երիշտ միացրու առարկա և գործողություն ցույց տվող հետևյալ բառերը.

- թռչուններ, մեղուներ, բալենի, մարդիկ.
- տղտղում են, երգում են, աշխատում էին, ծաղկեց:

Օրինակ՝ **Բալենին ծաղկեց:**

**Բալենի** բառը ցույց է տալիս **առարկա**, իսկ **ծաղկեց** բառը՝ նրա կատարած գործողությունը:

## Գիպե՛ս, որ...



Առարկան և նրա կատարած գործողությունը ցույց տրվող բառերի այսպիսի կապակցությունը կոչվում է **նախադասություն:**



Պատասխանի՛ր հարցերին՝ օգտվելով առարկա ցույց տվող հետևյալ բառերից. գրի՛ր ստացված փոքրիկ պատմությունը և վերնագրի՛ր այն.

Ի՞նչն էր շողում:  
Ինչե՞րը ծաղկեցին:  
Ինչե՞րն էին բացվել:  
Ի՞նչն էր գլգլում:  
Ո՞վ էր աշխատում:  
Ովքե՞ր էին խաղում:  
Ի՞նչն էր արթնացել:

արևը  
 հայրիկը  
 առվակը  
 բնությունը  
 երեխաները  
 ծառերը

## Վահագն Դավթյան



### Ձնծաղիկ


Գարնան առաջին  
 Նուրբ ծաղիկն եմ ես,  
 ճերմակ թերթերով  
 Ձնծաղիկն եմ հեգ:<sup>1</sup>  
 Քնած էի ես,  
 Քնած հողի տակ՝  
 Վրաս պաղ ձյունի  
 Ծածկոցն սպիտակ:  
 Սակայն լսեցի  
 Յողի տակ փխրուն,  
 Որ գարնան համար  
 Դուք շատ եք տխրուն,  
 Որ կարոտել եք  
 Կանաչ մարգերին,


Խենթ առվակների  
 Ուրախ երգերին,  
 Որ կարոտել եք  
 Ծաղկին ու ծառին,  
 Կապույտ երկնքում  
 Ճախրող ծիծառին:  
 Ու ես զարթնեցի  
 Փափուկ հողի տակ,  
 Պատռեցի ձյունի  
 Ծածկոցն սպիտակ  
 Ու թարմ բուրմունքով  
 Իմ նուրբ թերթերի  
 Այս կանա՛չ, կանա՛չ  
 Գարունը բերի...

<sup>1</sup>հեգ – խոնարհ՝ համեստ



### Հարցեր և առաջադրանքներ



1. Ինչե՞րն էին տիրում գարնան համար:
  2. Նրանք ինչերի՞ն էին կարոտում:
  3. Որանավորի բառերով բնութագրի՞ր ձնձաղիկը:
  4. Բանաստեղծության մեջ գրի՞ր բառակապակցությունները և դրանցից հինգը գործածի՞ր նախադասությունների մեջ:
-  Ձնձաղիկից բացի՝ ո՞ր ծաղիկն է գարնան ավերաբեր. կարո՞ղա՛ «Մանուշակին» բանաստեղծությունը:



### Հանդուճներ

Գարնան լուրը  
 Ձնձաղիկից իմացավ,  
 Լուռ արքրասվեց,  
 Իր արցունքից  
 Ջուր դարձավ:



Ցրրին ծաղկում է  
 Անվախ,  
 Մակայն թռչնում է  
 Նա վաղ:

Դիտի՛ր նկարները և պատասխանի՛ր տրված հարցերին՝ օգտվելով գործողություն ցույց տվող բառերից.



1. Ի՞նչ է անում ձկնիկը:
2. Ի՞նչ է անում արագիլը:
3. Ի՞նչ է անում սկյուռը:
4. Ի՞նչ է անում կատուն:
5. Ի՞նչ են անում ձիերը:
6. Ի՞նչ են անում եղնիկները:

վազում են  
 լվացվում է  
 լողում է  
 թռչում է  
 ցատկում է

## Կեռասիկը

(հեքիաթ)

### 1



Փոքրիկ Կեռասիկը բնակվում էր կեռասենու ծյուղի վրա: Նա իր երկվորյակ քույրիկի հետ երկար ժամանակ քնել էր նույն օրորոցի մեջ:

Մի առավոտ մեկը ծեծեց պատուհանը:

– Ո՞վ է, – ձայն տվեց Կեռասիկը սաստիկ վախեցած:

– Այդ ես եմ՝ Հովիկը, – պատասխանեց անծանոթ մի ձայն: – Ինչո՞ւ եք պառկած մնացել ձեր սենյակում: Բոլորն էլ մեծ պատրաստություն են տեսնում: Շուտով գարուն է գալու: Վեր կացեք:

– Մենք ի՞նչ կարող ենք անել, դեռ շատ փոքր ենք:

Այդ ժամանակ մայր կեռասենին ասաց իր զավակներին.

– Իմ պստի՛կ, իմ սիրո՛ւն կեռասիկներ, դուք ամբողջ ձմեռ քնեցիք ձեր օրորոցում: Ես խնամքով ծածկեցի ձեզ, որ չմըրսեք: Իմ հյուսթով կերակրեցի ձեզ, որ մեծանաք: Հիմա ժամանակն է, որ դուրս գաք ձեր սենյակներից և դիմավորեք գարունը: Ես հրավիրել եմ վարպետ դերձակուհուն՝ Մարտին, որ ձեզ համար ճերմակ մետաքսից հագուստներ կարի:

Կեռասիկները շատ ուրախացան: Անմիջապես տերևների միջից դուրս հանեցին իրենց գլխիկները:

– Օ՛հ, ի՛նչ լավ է, ի՛նչ հրաշալի է, – հիացած բացականչեցին նրանք:

### 2

Հանկարծ մի ձայն լսվեց.

– Բը՛զգ... բարի լո՛ւյս, գեղեցի՛կ կեռասիկներ:

– Ներողությո՛ւն, ո՞վ ես դու, մենք քեզ չենք ճանաչում, – վախեցած ասաց Կեռասիկը:

– Ես մեր փեթակի ամենաաշխատասեր մեղուն եմ: Դրա



համար էլ իմ անունը ժիրիկ է: Կուզե՞ս բարեկամներ դառնանք, ես շատ եմ սիրում քաղցրահամ, սիրուն ծաղիկներ:

Կեռասիկը նույնպես սիրեց աշխատասեր մեղվին և նրան հյուրասիրեց ծաղկափոշիով ու ծաղկահյութով: Ժիրիկը շատ զոհ մնաց և շնորհակալություն հայտնելով՝ թռավ գնաց:

Կեռասիկն ու իր քույրիկը օրեցօր մեծանում էին, և սպիտակ հագուստն արդեն նեղ էր նրանց վրա: Մի օր էլ կամացուկ հանեցին այդ զգեստները և տվեցին, որ Զովիկը տանի:

Կարճ ժամանակ հետո նրանք դարձան կլոր այտերով սիրուն կեռասիկներ:

Մի առավոտ էլ արևը համբուրեց նրանց զույգ այտերը: Փոքրիկ կեռասիկները հուզմունքից կարմրեցին: Բարի արևն ամեն օր շոյում էր նրանց: Եվ կեռասիկները հետզհետե ավելի էին մեծանում ու կարմրում...



### Հարցեր և առաջադրանքներ



1. Ո՞վ այցելեց կեռասիկներին. ինչո՞ւ:
2. Կեռասիկները ինչո՞ւ ուրախացան:
3. Նրանք ինչպե՞ս դիմավորեցին մեղվին. ինչո՞ւ:
4. Պարմի՞ր՝ կեռասիկները ինչպե՞ս մեծացան ու կարմիր այտերով կեռասներ դարձան:
5. ա) Ինչո՞ւ են **Կեռասիկ**, **Նովիկ**, **Ժիրիկ**, **Մարր** բառերը գրված մեծատառով.

Քաղցր  
Քաղցրահամ

բ) գրի՞ր **Նովիկ** և **Ժիրիկ** բառերի արմատները և բացատրի՞ր այդ անունների իմաստները:



Նկարի՞ր հեքիաթի քո հավանած հարվածը կամ «հերոսին»:

### Հաներոններ



Ականջօղ գիրեն՝  
Երբ ուզեմ, կուրեն:



Անրես, արագ սուրում է,  
Ներն էլ բարակ սուրում

Սարերով կգա,  
Պարելով կգա,  
Թե նայես նրան,  
Ե՛վ կա, և՛ չկա:

<p><b>1.</b></p>	<p>Գործածելով հետևյալ բառազույգերը՝ գրի՛ր մի փոքրիկ պատմություն՝ «Առավոտ» վերնագրով.</p>
	<p><i>լույս-բացվել, արև-ծագել, գագաթներ-փայլել, ծառագայթներ-տաքացնել, թռչուններ-երգել, ծաղիկներ-բուրել, թիթեռներ-ձախրել, մարդիկ-աշխատել:</i></p>
<p><b>2.</b></p>	<p>Կազմի՛ր նախադասություններ՝ <i>հատկանիշ, առարկա և գործողություն</i> ցույց տվող հետևյալ բառերով.</p>
	<p><i>կլորիկ, կարմրել, կեռասիկներ. աշխատել, ժիր, մեղուներ. փոքրիկ, քնել, կեռասիկներ. փչել, անուշ, հովեր. ոսկի, օրորվել, հասկեր. վարդեր, քնքուշ, բուրել. նախշուն, երգել, հավքեր:</i></p> <p>Օրինակ՝ <i>Ոսկի հասկերը օրորվում էին:</i></p>

Վրեժ Վարդունի

**Ծաղիկը՝ օրորոց**

Մտած ծաղկի նուրբ գիրկը՝  
Փռչոտվում<sup>1</sup> էր մեղվիկը,  
Հավաքում էր նեկտարը<sup>2</sup>  
Կաթիլ-կաթիլ մեղրիկը:

Ու մեղվիկը չիմացավ՝  
Մայրամուտը երբ անցավ,  
Մութը իջավ իր ճամփին  
Ու աչքերին քող դարձավ:

– Ուշ է, գնամ,– ասաց նա:  
Ծաղիկն ասաց.– Մի՛ գնա,



Քույրիկ, քնի՛ր իմ գրկում,  
Օրդ իմ մեջ արթնանա:

Լսեց մեղուն, չգնաց,  
Ծաղկի գրկում նա մնաց.  
Օրոր ասաց ծաղիկը՝  
Արթուն մինչև լուսաբաց:



<sup>1</sup>Վոշոտվել – այստեղ՝ ծաղկի վոշիով պատվել

<sup>2</sup>Մեկտար – ծաղկի քաղցր հյութը

օրոր  
օրորոյ



**Հարցեր և առաջադրանքներ**

- ա) Բանասարտեղծությունից դ՛նրս գրիր գեղեցիկ պատկերները և դրանք գործածելով պատմի՛ր բանասարտեղծության բովանդակությունը:
- բ) Փորձի՛ր նկարել բանասարտեղծության գողտրիկ պատկերներից մեկը:
- գ) Տանը կարդա՛ «Ծաղիկների ձայնը» հեքիաթը:



**Հանելուկ**

Թե որ ձեռք փասս,  
Կիսայթի քեզ,

Բայց կմեռնի  
Խայթելուն պես:

Կազմի՛ր նախադասություններ՝ պատասխանելով տրված հարցերին.

ե՛րբ	ո՞վ (ովքե՛ր)	ի՞նչ արեց (արեցին)	ո՞ր
կիրակի օր ուշ երեկո երեկ Սուրբ Հատիկ	երեխաներ հայրիկ գրոսաշրջիկներ մայրիկ	մեկնել հասնել ժամանել գնալ	Ծաղկածոր Երևան Հայաստան եկեղեցի



**Անձրևը**

Երբ ոսկի արևը թաքնվում է ամպերի հետևում, դուրս է վազում անձրևաբեր Ամպիկը: Նա հյուսված է մառախուղից: Ամպիկն ուռած-փքված թռչում է երկնքով և մրցում քամու հետ: Ամպիկի մայրը՝ Տեղատարափիկը, մտահոգ կանչում է աղջկան, բայց նա, իր ամպագույն ձիուկները հեծած, խենթուկի պես վազում է կապույտ երկնքով:

Երբ շատ է վերև բարձրանում, անձրևաբեր Ամպիկը սկսում է արտասվել՝ մարգարտի նման արցունք թափելով աչուկներից: Դրանք գետին են իջնում արծաթագույն թելիկների պես, իսկ երեխաներն ուրախանում են, որ ամպից անձրև է թափվում:

Ամպիկի՝ կաթ-կաթ թափած արցունքները հոսում են փոքրիկ առուններով: Ահա հոսում է մի առվակ, երկրորդը, երրորդը... Ավելի հեռվում առվակները հանդիպում են իրար և դառնում մի արագահոս գետ:

Ահա այսպես Ամպիկի մարգարտե արցունքները հոսում են աշխարհում և օգնում են մարդկանց. ջրում են ծառերն ու ծաղիկները, դաշտերն ու այգիները: Իսկ երբ գալիս է Տեղատարափիկը և իր հետ մութ ու մշուշ է բերում, Ամպիկը հրում-քշում է սև ամպերին: Այդ ժամանակ կրկին երկինք է բարձրանում ոսկի արևը, և արծաթե կաթիլների մեջ յոթ գույներ են վառվում: Ու երկնքից կախվում է վառ ծիածանը:

Ամպիկն այլևս լաց չի լինում. նա էլ երեխաների նման ուրախանում է գույնզգույն ծիածանով: Մեկ էլ՝ հո՛ւպ, ցատկում է ծիածանի վրայով ու թռչում դեպի լազուր՝ երկինքը...



<sup>1</sup>Լազուր – բաց կապույտ, երկնքի, ծովի գույն

Տարգարիչ  
Տարգարչե




### Հարցեր և առաջադրանքներ

- Նեղինակը ինչերի՞ է նմանեցնում անձրևի կաթիլները. ինչո՞ւ:
- Ինչի՞ց են առաջանում առվակներն ու գետակները. նրանք ի՞նչ օգուտ են փայխս մարդկանց:
- Պարսի՞ր դասի այն հատվածը, որտեղ նկարագրվում է, թե ինչպե՞ս է առաջանում ծիածանը:
- Դասի մեջ գրի՞ր **-իկ, -ուկ, -ակ** փոքրացուցիչ ածանց ունեցող բառերը. շարքերը ամբողջացրո՞ւ նոր բառերով:



Դասարանում կարդացե՛ք «Անձրևը» և «Գորյուկը» փոքրիկ բանաստեղծությունները:



### Հանկուծներ

Ցնցուղն առած շրջում է,  
Ինչ պարսախի, թրջում է:

Արեգակի ժպիտը վարդ  
Կամար բացեց մի գունազարդ:



Անձրևը թողեց  
Երկնքում ցողեք,  
Արևը փվեց  
Յոթ գույնի շողեք:

### Ծուրասկուն

Կապեց շքեղ ծիածան,  
Ծիւ-ծաղիկներ հիացան:





<p><b>1.</b></p>	<p>Լրացրո՛ւ նախադասությունները՝ տեղադրելով տրված բառերը կամ բառակապակցությունները.</p>
	<p><i>Ցող էր նստել: (խոտերի վրա, վաղ առավոտ, արծաթագույն)</i>  <i>Արևը փայլեց: (արևածագ, ոսկեհեր, երկնականար)</i>  <i>Թիթեռները թռչում էին: (կեսօր, գույնզգույն, օդ)</i>  <i>Մեղուները վերադառնում են: (ժիր, մայրամուտ, փեթակ)</i>  <i>Ամպիկը սահում էր: (փոքրիկ, դանդաղ, երեկո, կապույտ երկինք)</i>  <i>Լիալուսինը հայտնվեց: (գիշեր, աստղազարդ երկինք)</i></p> <p>Օրինակ՝ <i>Գիշերը աստղազարդ երկնքում հայտնվեց լիալուսինը:</i></p>
<p><b>2.</b></p>	<p>Տեքստից գտի՛ր պատկերավոր տասը բառակապակցություն և դրանք գործածի՛ր մտքով իրար հետ կապված նախադասությունների մեջ:</p> <p>Վերնագրի՛ր քո հորինած պատմությունը:</p>

**Սուրեն Սուրադյան**



Ինձ փոստատար ծիծեռնակը  
 Չեռվից բերեց այս նամակը:  
 Ձեռագիրը շատ էր ճանաչ.  
 Գրված էր այն գույնով կանաչ:  
 Չէր չորացել դեռ թանաքը,  
 Տառերն էին  
 Ձնծաղիկն ու մանուշակը:  
 Արագիլն էր կանգնել ինչպես  
 Միջակետը.

Կաթկթուն էր կտուրից ձյուն –  
Բազմակետը:



Իր հարցական ճյուղն էր կախել  
Եղրևանին.

Փայտփորիկն էլ՝ կիրթ,  
գրագետ,

Փակագիծն էր փռվել տեսքով  
Ծիածանի:



Դարձել էր մեծ մի  
վերջակետ:

Ինչ-որ տողում մեկն էր ճչում.

Այս նամակը երբ  
կարդացի,



Այդ կկուն էր բացականչում:

Գարնան շունչը ես զգացի:



*Միջակետը  
վերջակետը*



### Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է գարնան նամակի փոստատարը ծիծեռնակը:
2. Ի՞նչ գույնով էր գրված գարնան նամակը. ինչո՞ւ:
3. Ինչո՞ւ էին գարնան նամակի տառերը ձնծաղիկն ու մանուշակը:
4. Կետրադրական ո՞ր նշանը ինչի՞ է նմանեցված. ինչո՞ւ:
5. Բանաստեղծության մեջ գրի՞ր բարդ բառերը և փորձի՞ր որոշել դրանց արմատները:



- ա)** Նկարի՞ր բանաստեղծության քո հավանած պատկերը:  
**բ)** Գարնանն ուղղված մի նամակ գրի՞ր կամ հասնելուն հորի-  
 մի կետրադրական որևէ նշանի մասին:

Արտագրի՞ր տեքստը՝ նախադասությունները գրելով ճիշտ ուղղագրությամբ.


*անտառը բնության զարդն է անտառում աճում են տեսակ-  
 տեսակ ծառեր ու թփեր ամառվա տաք օրերին անտառում զով է  
 ու դուրեկան օդը միշտ թարմ է ու մաքուր կանաչ ձյուղերի ու  
 խիտ տերևների մեջ անդադար երգում են թռչունները գեղեցիկ  
 են Դիլիջանի, Գուգարքի և Խոսրովի անտառները  
 սիրենք ու պահպանենք անտառը*

## Թեմայի ամփոփում

1. Կարդացե՛ք մեծ երգահան Կոմիտասի «Սիրի՛ր բնությունը» պարզամը՝ ուղղված մանուկներին. Կոմիտաս վարդապետը ի՞նչ պարզամ է տալիս ձեզ:

2. Կոմիտասի ո՞ր բարեմասնությունն է բացահայտում այս խրատը:

3. Ինչո՞ւ պետք է սիրել ու պահպանել բնությունը:

 4. «Մանկական հանրագիտարանից» տեղեկություններ գրիր Կոմիտաս վարդապետի մասին:

5. Սովորեցե՛ք Կոմիտասի «Կարավիկ» երգը և երգեցե՛ք զարնանային զվարթ տրամադրությամբ:

Կոմիտաս վարդապետ

## Սիրի՛ր բնությունը



Կայտա՛ն պատանի, աշխու՛յժ աղջիկ, սիրի՛ր բնությունը:

Հետևի՛ր բնության դպրոցին: Բա՛ց արա միտքդ ու կարդա՛ նրա դասագիրքը: Բա՛ց սիրտդ, և թող այնտեղ արձագանքեն բնության գաղտնի ձայները: Կարդա՛ բնության գիրքը, որ կարելի չէ ոչ մի բանով գրել և ոչ մի գույնով նկարել:

Բնության մեջ կյանք կա, ամեն ինչ շարժվում է ու փոփոխվում:

Բնությունը նման է արշալույսին՝ մի՛շտ թարմ, մի՛շտ նոր. նա թե՛ ծնող է և թե՛ ձեզ պես մանուկների նման միշտ մանուկ է նաև:

Կայտա՛ն պատանի, աշխու՛յժ աղջիկ, սիրի՛ր բնությունը:



Իսկ դու կարո՞ղ ևս քո մասին ասել.

Ես սիրում ու պահպանում եմ բնությունը:

Ես սովորում եմ կարդալ բնության դասագիրքը:

այո՛ւ    ո՛չ

Կարդացե՛ք Անտուան դը Սենտ Էրզյուպերիի «Փոքրիկ իշխանը» հեքիաթի տրված հատվածը և բեմադրեցե՛ք այն:

## Ուղղագրական և բառակազմական արժեք ունեցող բառափնջեր

գանձ	ընդամենը	արև	մոռիթի
գանձարուն	ընդհանուր	արևածագ	սաղբյուր
գանձարան	զգալ	արևաշող	ցայտաղբյուր
առաջ	զգացում	օր	նուրբ
առաջին	սատչել	այսօր	նրբանցք
արձակել	փախչել	կեսօր	խինդ
արձակուրդ	ծաղիկ	արձագանք	խնդություն
սև	ծաղկել	արձագանքել	ձյուն
սևաչա	ծաղկաման	ամբողջ	ձևեմարդ
ճամփա	նախշ	ամբողջովին	ձևագնդի
ճամփորդ	նախշել	նվագ	զարդ
ճամփորդել	նախշուն	նվագել	զարդարել
հեքիաթ	ընկույզ	սրբել	թագ
հեքիաթային	ընկուզենի	սրբիչ	թագադրել
հեքիաթասաց	թռչուն	պսպղալ	օդ
թագ	թռչել	պսպղուն	օդանցք
թագավոր	թախճօ	եղբայր	աշխույժ
թագուհի	դեղձ	եղբայրանալ	աշխուժանալ
բույր	վրձին	զգույշ	գոգ
բուրել	դերև	զգուշանալ	գոգնոց
բուրմունք	դերևախիտ	երաժիշտ	հարթ
անձրև	դերևաթափ	երաժշտություն	հարթել
անձրևել	արթուն	ձյուն	հորդ
երգ	արթնանալ	ձյունածածկ	հորդատար
երգիչ	զարթնել	օգնել	ձագ
երգչուհի	ներքև	օգնություն	ձագուկ
համբույր	վերև	որջ	քնքուշ
համբուրել	սոչև	ճեղք	քնքշորեն

ուղիղ	Մշո դաշր	թև	քաղցրահամ
ուղղել	Սև քար	թևածել	օրոր
երջանիկ	սոյուծ	ճերմակաթև	օրորոց
երջանկություն	սոյուծասիրտ	սեզ	նարգարիտ
Երևան	սոյուծաձև	գեղգեղել	նարգարիտ
Սևան	հարձակվել	հյութ	նիջակետ
նարդ	հարձակում	հյութալի	վերջակետ
ժողովուրդ	սուրբ	ծածկել	
եղբայր	սրբություն	ծածկոց	
հորեղբայր	սրբավայր	քաղցր	

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՉՅՈՒՆԵՐԻ ԹՎԳՎՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ. Ո՛վ է եկել...

Ն. Նայրապետյան

Փափուկ ձյուն. *Գ. Սարյան*  
Փաթիլներն են բերել երկնքից. *Լսյր Գ. Մովսիսյանի*  
Մանուկն ու ձյունը. *Գ. Սարյան* ..... 86  
Բեմբին (*հեթիաթ*). *Լսյր Ծ. Զայթենի*..... 88  
Չմեռային քուն. *Լսյր Է. Սեթոն-Թոմսոնի*..... 91  
Չմեռ. *Վ. Կարենց*..... 94  
Եղևնին. *Լսյր Ն. Վարդանյանի* ..... 95  
Օրացույց. *Վ. Վարդունի* ..... 98  
Չնեմարդը (*հեթիաթ*). *Վ. Սուրեն* ..... 99  
Չյունոտ պար. *Վ. Վարդունի* ..... 104  
Նրաշք գիշեր *Է. Օհանյան*..... 105  
Գզգզված ճնճուկը (*հեթիաթ*). *Լսյր Կ. Պաուստոսյանի* ..... 109

**ԼԱՎ ԱՐ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐ.** Արև լինեմ. *Պ. Խաչատրյան* ..... 113  
Շունը աչքերով էր խոսում. *Լսյր Գ. Մովսիսյանի* ..... 114  
Մարտի 8-ին. *Ա. Պարսամյան* ..... 116  
Ծառապունկ. *Ա. Պարսամյան* ..... 119  
Երկու ջրիկ, երկու քույրիկ. *Մ. Խերանյան* ..... 121  
Լորերի ընփանիքը. *Լ. Սարգսյան* ..... 123  
Արծիվն ու հովիվը. *Ս. Ալաջաջյան* ..... 125  
Դու ի՞նչ ես արել. *Յ. Սահակյան* ..... 127

## ԻՄ ԱՆՈՒՇԻ՛Վ ՆԱՅԱՍԱՄՆ. Մայրիկն անուշ անուն է...

**Յ. Սահակյան** ..... 129

Մեր փան մեջ. *Ս. Կապուտրիկյան* ..... 130  
Երգ հայրենիքի մասին. *Ս. Կապուտրիկյան* ..... 131  
Ազգային փոն. *Լսյր Ս. Լիսիցյանի*..... 133  
Մանուկ Դավիթը..... 135  
Փոքրիկ թռռնիկիս. *Ե. Պեդրոսյան*..... 139  
Այծեմնիկը. *Լսյր Ա. Ղանալանյանի* ..... 141  
Քաջ Վարդանը..... 144  
Խաղաղության դասը. *Ս. Մուրադյան*..... 146  
Անմահ գանձերը. *Ս. Մուրադյան* ..... 149

**ԳԱՐՈ՛ՒՆ Է, ՍԵՐՈ՛ՒՆ Է.** Ես զարուն փեսա. *Վ. Վարդունի* ..... 151

Գարնան հրավերը. Ա. Տեղ-Գրիգորյան	152
Ձնծաղիկ. Վ. Դավթյան	154
Կեռասիկը. Մ. Թանգարանյան	156
Ծաղիկը՝ օրորոց. Վ. Վարդունի	158
Անձրևը. Ըստ Մ. Պրիշվինի	160
Գարնան նամակը. Ս. Մուրադյան	162
Միրի՛ր բնությունը. Կունիդասս վարդապետ	164

**Ուղղագրական և բառակազմական արժեք ունեցող բառափնջեր.....165**

Հանելուկները, ասացվածքները, շուտասելուկները, սուտասելուկները՝  
Ս. Մկրտչյանի, Ս. Մուրադյանի, Մ. Կորյունի, Վ. Վարդունու, Յ. Սահակյանի...





*Քյուրքյան Անժել Ներսեսի  
Տեր-Գրիգորյան Լիլիթ Աշոտի*

## **Մայրենի 2**

(2-րդ լրամշակված հրատարակություն)

**Նանրակրթական դպրոցի  
2-րդ դասարանի դասագիրք**

**Մաս 2**

**Նաստարված է**

**ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից**

**Նկարիչ՝ Մուսաննա Այվազյան**

**Նամակարգչային ձևավորումը՝ Ն. Գևորգյանի**

**Չափսը՝ 70x100 1/16, թուղթը՝ օֆսեթ,  
տպագրական 5.5 մամուլ, տպաքանակը՝ 8749:**

**Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:**

**ԷԴԻՏ ՊՐԻՆՏ**

Երևան, Բումանյան 12  
հեռ.՝ (374 10) 520 848  
www.editprint.am  
info@editprint.am



**EDIT PRINT**

12 Toumanyar str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
www.editprint.am  
info@editprint.am